№ 46 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 1

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 1 № 46

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Փետրվարի լոյս 25-ի գիշերը եղբայրասպան դաւաճան ձեռների զոհ գնաց Դաշնակցութեան զինւոր

Սարգիս Պետրոսեանցը

որի մասին ընկերները խորին վշտով համակված խնդրում են բոլոր համակրողներին հանգուցեալի յիշատակը յարգել: Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ Միքայէլեան հիւանդանոցից հինգշաբթի, մարտի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Թանգոյեան եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

(Ն. Չ. Ն.) 3—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Հինգշաբթի, մարտի 1-ին
Հայ դրամատիկ ընկերութեան խումբը
ԿԸ ՏԱՅ
ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

ՑԵՐԵԿՈՎ
ի պատիւ Վարդանանց տօնի
կը ներկայացվի
ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ
Օպերէտ. 5 արար. Թ. Վ. Տիրացեանի
Սկիզբը ցերեկվայ ժամը ճիշտ 12-ին:

ԵՐԵԿՈՅԵԱՆ
մասնակցութեամբ Տ. Սիրանոյշի
կը ներկայացվի առաջին անգամ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԸ
Դրամա 4 արարուածով
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին:
Տեղերի գները բենեֆիսի են:

Մասնակցում են. տ. տ. Աւետեան, Մայսուրեան, Մելիքեան, Յասմիկ, Նուիկեան, Սիրանոյշ, Վարդուհի, Օհանեան, պ. պ. Աբելեան, Ագելխանեան, Ազաբէգեան, Ազայեան, Ամատեան, Զարիֆեան, Թաշճեան, Մանուէլեան, Յարութիւնեան և ուրիշները:

Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Ցուրինեան
Ռ. Յովհաննիսեան
Ռեժիսսեօր՝ Յ. Աբելեան
ատ. 2—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
„ՄՈՒՐՃ"
Գրական, հասարակական և քաղաքական
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VII տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ. Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական 3 ֆ.

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.). երկրորդ վճարը լինում մայիսին: Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտենբերգ» գրախան. (Երեւան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գօլօվինսկի պրօսպ. Թատր. դիմաց):

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ»:

Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ր., $^1/_2$ եր. 5 ր., $^1/_4$ եր. 2 ր., տողատեղ (կօրպուս) 40 կ.:

10—0 Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

ՊՐԵՄԻԱ! 1000 ՏՈՒՓ ՇՕԿՕԼԱԴ 1 ՖՈՒՆՏԱՆՈՑ ՊՐԵՄԻԱ!
„ՇՕԿՕԼԱԴ ԵԱՐՎԷԼ"
Ծախվում է ամենակարճ ժամանակամիջոցում
Պրեմիան 25 կօպ. ՄԻՆՉԵՒ 50 րուբ. կանխիկ փողով:
100 տուփի մէջ միայն 50 տուփն է պրեմիայով:
Գները՝ ինչպէս սովորականը, նոյնպէս և պրեմիայով
Տուփը 1 րուբլի:
Вельяминовская № 4.
(Կ. Ե. Հ. Ն. Հ. Կ.) ա 4—6

Մարտի 6-ին, առաւօտեան ժամը 12-ին
Արտիստական ընկերութեան շինութեան մէջ
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է
Հայոց Դրամատիկական Ընկերութեան
Ընդհանուր ժողով
ՉԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

1) Վարչութեան պ. պ. քարտուղարի և գանձապահի հաշիւ
2) Ընտրութիւններ
3) Զեկուցումն Վարչութեան առաջիկայ թատրօնական սեզօնի մասին

(փ. 25, 29, մար. 6,) 2—3

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.
Վճարն է խորհրդի համար 50 կօպ.
Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.
Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՉԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.:
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. չորեքշ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Դ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.:
ԵՐՄՕԼԱԵՎ.—Երեխայոց ամեն օր 12—1 ժ.
ԿՈՒՑԵՎ.—Ջղային, երեքշ., հինգշ. շաբ. 12—1 ժ.
ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամեն օր 12—1 ժ.
ՊԱՎԼՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. ամեն օր 12—1 ժ.
ՄՕՆՍԷ.—Երեխ. երեքշ. հինգշ. շաբ., 4—5 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԷՌԻՑՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեքշ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.:
Բժ. Զ. Ֆ. ՆԻՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
[illegible]
Բժ. Կ. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմ. մասսաժ, էլեկտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕԴԵՑԿԱ.—Մասսաժ. 11—4. ժ.
Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՎՍԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ Դ. ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը:
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ., հինգշ. շաբ. 4—5 ժամը:
ԵՐՄՕԼԱԵՎ.—Ներք. երեխ. ամեն օր 12—1 ժ.:
ԿՈՒՑԵՎ.—Ջղային. երեքշ. հինգշ. կիր. 12—1 ժ.
Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզը ենթարկել, հիպնօզել, ատամների և ծամանների քննելը—ըստ համաձայնութեան:
ատ. (Չ. ու.) 78—144

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Մշտական մահճակալներով
Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր
ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեկտրոբուժութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ:
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.:
Գ. Ա. ԲԷՅԵՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.:
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն:
Հիւանդանոցում բժշկումն հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն:
Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կօպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան. Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:
ատ. Ե. Հ. Կ. 30—100

ԷՄՄ. ԹԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Նոր գրքոյկներ
I. Լև Տօլստոյի գրուածքներից՝ հեղինակի պատկերով
1. «Աղօթք», 8 եր. 5 կօպ.:
2. «Սէր», 16 եր. 8 կ.:
3. «Սեռային յարաբերութիւն», 30 եր. 12 կ.:
II. Պրօֆ. բժշ. Լէօ Բուրգերշտէյն՝
1. Առողջապահիկ կանոններ՝ բոլոր ուսումնարանների աշակերտների ու աշակերտուհիների համար 20 եր. 7 կ..
Դիմել՝ 1. Москва, свящ. Э. Назарьянцъ. 2. Тифлисъ, Центральная Книжная Торговля 3. Баку, Книжный магазинъ «Сатрудникъ»:
Մոսկվայից դուրս միմիայն տասնեակներով են ուղարկվում, և ուզած գրքոյկի՝ գնողը վճարում է իսկական գնից 1 կօպ. պակաս:
Իսկ բոլոր 4 գրքոյկներից միասին գնողը՝ իւրաքանչիւր 10-ին վճարում է 2 ր. 50 կ.:
Երկու դէպքումն էլ Թարգմանողին դիմողը ճամփի ծախս չէ վճարում:
ատ. (Ե. Հ.) 4—6

Կովկասեան նկարիչների փոխադարձ օգնութեան ընկերութիւն
ԶՈՒԲԱԼՕՎՆԵՐԻ
նոր կառուցած
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ ՄԷՋ
բացված է
ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
Բաց է ամենայն օր ժամի 10 առ.—5 եր.
մուտքը 25 կօպէկ
աշակերտներին, երեխաներին եւ զինւորներին 15 կ.

Բ. Գ. Օրտզիսի
ԶԷՆՔԻ ՄԱԳԱԶԻՆ
ՆԵՐԿԱՅ ՏԱՐՎԱՅ
մարտի 1-ից
ԲԱՑՎԱԾ Է
Գօլօվինսկի պրօսպեկտում արական I գիմնազիայի դիմաց, Փառքի առճարին կից: Ամեն տեսակ զէնքերի ՃՈԽ ընտրութիւն:
(Հ. Հ. Կ.) ա. 1—3

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Անաստասեվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966:
Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն:
Երթեւեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետեւեալ բժիշկների ձեռքով.
Ա. Ր. Ֆիշեր.—երեքշաբթի, շաբաթ:
Ա. Գ. Բարաւկօվ.—չորեքշաբթի:
Ս. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի:
Ա. Ա. Նովիցկի.—երկուշ. ուրբաթ:
Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.:
Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկօ-միկրօսկօպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն:
Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստումն և այլն:
(Հ. Հ. Ե.) 11—50

V-ՐԴ ԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
Ազատութեան դրօշակիր Վարդանին Ղեւոնդ երէցը օրհնում է:
Պատմական այս պատկերը մեծադիր՝ 70×51 սանտ. Վարդանանց և Ղեւոնդեանց յիշատակ՝ այս բարեկենդանի շաբաթը վաճառվում է հատը փոխանակ 1 ր. 50 կ.-ի—50 կ., ճանապարհածախսով, յատուկ այս պատկերի համար պատրաստված խողովակներում—75 կ.: Տասը օրինակը 5 ր. 50 կ.:
Հայ պարբերական թերթերի բոլոր բաժանորդներին, եթէ նրանք իրանց պատուէրների հետ ուղարկեն և տպագրված հասցէն, այդ պատկերի հետ կուղարկվի նրանց «ԱՂԲԻՒՐԻ» և «ԳԵՂԱՓՆՋԻԿ»-ի առաջին №№-ը ձրի:
Հասցէն՝ Тифлисъ, редакція «Агбюръ»
ատ. 4—6

ԲԺԻՇԿ
Տ. Ա. Իսախանեան
ՄԱՍՆԱԳԷՏ՝
ներքին եւ վեներական
հիւանդութիւնների
Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը:
ատ. (Չ. ու. Չ.) 46—100

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՄԱՍՆԱԳԷՏ
սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների:
Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.:
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33:
(Ա. Օ.) ատ. 9—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փաստերի առաջ. Պետական Դումայի շուրջը. Կուսակցութիւնները Դումայում. Զիւանշիրի գաւառից. Երեկոյթ յօգուտ հայ ուսանողների. Մամուլ. Պետական Դումայի բացման օրը. Գօլօվինի ընդունելութիւնը Ցարսկօյ-Սելօում. Ինչ է ասում Կլեմանսօն. Մայրաքաղաքի կեանքից. Առողջապահութիւնը ճեմարանի հիւանդանոցում. Ներկայացուցչական կառավարութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Թուրքիայից. Նամակ Գերմանիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՓԱՍՏԵՐԻ ԱՌԱՋ

«Մշակի» № 37-ում առաջ բերելով Էջմիածնի ճեմարանի առողջապահութեան և հիւանդանոցի այն մռայլ նկարագիրը, որ արել էր Վ. Աղեկեանը, մենք անհաւատալի համարեցինք այդպիսի իրականութիւն հայ բարձրագոյն կրթարանում և ցանկութիւն յայտնեցինք, որ ճեմարանական վարչութիւնը հերքէ տխուր փաստերը:

Վ. Աղեկեան այդ առիթով ներկայացրեց մեզ մի յօդուած, որով նա ոչ միայն չէ ժխտում իր նախկին ասածները, այլ ընդգծում է նրանց խսութիւնը նոր ցուցումներով:

«Մշակի» № 43 և ներկայ համարում զետեղված նրա յօդուածը աշխատում է ապացուցանել, որ ճեմարանի առողջապահութիւնը գտնվում է չափազանց անմխիթարական վիճակի մէջ և որ վարչութիւնը լուրջ միջոցներ չէ ձեռք առնում բարւոքելու տիրող դրութիւնը:

Առաջ բերած փաստերը աննպաստ են առհասարակ, իսկ մի քանիսը վերին աստիճանի տխուր և վրդովեցնող:

Այդ փաստերի հետ չէ կարելի հաշտվել ոչ մի դէպքում: Եւ մենք չենք կարողանում հասկանալ, թէ ինչպէս Էջմիածնի վարչութիւնը մինչև այժմ լուրջ ուշադրութիւն չէ դարձրել այդ առարկայի.

Միթէ աշակերտները պէտք է հիւանդութիւնների ենթարկվեն, իսկ հիւանդները ծանր փորձութիւնների, որպէսզի համոզեցուցիչ դառնայ թէ չէ կարելի անմաքուր թողնել սենեակները, սառն օդի մէջ պահել աշակերտներին և անխնամ կերպով հիւանդներին զետեղել հիւանդանոցում:

Ոչ աշակերտների առողջութեան կարեւորութիւնը, ոչ ճեմարանի հեղինակութիւնը և պատիւը, ոչ գործի լրջութիւնը թոյլ չեն տալիս, որ զանցառու և անկարգ վիճակի մէջ գտնվի ճեմարանի կեանքի այդ կարեւոր կողմերից մէկը:

Եւ մենք դարձեալ կրկնում ենք, որ վարչութիւնը պէտք է հերքէ, եթէ կարող է, ներկայ յուզիչ նկարագիրը:

Դա ասում ենք ոչ այն պատճառով, որ Աղեկեանի գրուածքը համարում ենք անհիմն, այլ որովհետև ցանկանում ենք լսել և մեղադրվող կողմը, վարչութիւնը, ցանկանում ենք լսել բացատրութիւններ:

Եւ եթէ նա անկարող կը լինի հերքել՝ դա կը նշանակէ, որ մեր առաջ իսկապէս դրված է մեր կրթական, կուլտուրական իրականութեան մի տխրագին էջը, մի ցաւոտ մեծ վէրքը:

Փաստեր են թէ ոչ յօդուածագրի առաջ բերածները:

Եթէ չը հերքվեն, նրանք կը ճանաչվեն իբրև ստոյգ փաստեր:

Հասարակութիւնը ներկայումս կանգնած է հրատարակված փաստերի առաջ:

Ա. Քալանթար

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Այսօր Պետական Դումայի պրեզիդիումի նիստում որոշվեց արդէն սահմանված տեղերից այլևս աւելի տեղեր չը յատկացնել մամուլի ներկայացուցիչների համար, չը տալ կուլուարների տոմսակներ, չը թոյլ տալ մամուլի այն ներկայացուցիչներին, որոնք տեղեր գրաված ունեն վերին յարկում հասարակութեան մէջ, իջնել ներքև, կուլուարները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի: Պետրով քահանան դիմել է Պետական Դումայի նախագահին մի նամակով, որի մէջ, ի միջի այլոց, ասում է. «Սպասածներս չը կատարվեցին, ես պէտք է մնամ վանքում: Թող այդպէս լինի: Եթէ Դումայում բարձրանայ Դումայի նիստերի ժամանակ ինձ տարագրելու հարցը, թոյլ տուէք դիմել Դումայի անդամներին մի սկզբունքային խնդրանքով յանուն Դումայի պաշտպանման, որպէսզի չը բարդացնել առանց այն էլ նրա դժուարին կացութիւնը. հանդարտութեամբ վերաբերվել սինօդի մերժմանը թոյլ տալ ինձ դուրս գալ վանքից: Սինօդի մերժումը պէտք է ընդունել լռութեամբ, առանց խօսք անգամ ասելու»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի: Դումայի բաժինները շարունակում են ստուգել անդամների լիազօրութիւնը: Վճռված է պահանջել Բելինեվի, Մօգիլևսկի և Բեսարաբիայի նահանգների ընտրութիւնների ճշտութիւնը: Բեկանելու աւելի առիթ են տալիս Պօլտավայի և Տամբովի նահանգների ընտրութիւնները: Վիճելի հանդիսանում են Տաւրիկեան, Խերսոնի և Գրօդնայի ընտրութիւնները: Բարդ իրաւաբանական հարց ներկայանում են Լիֆլանդիայի նահանգի ընտրութիւնները: Պետական Դումայի մօտակայ նիստը կը կայանայ ուրբաթ օրը:

Օդեսայի պատգամաւոր Պէրգամենտը պրեզիդիումին ներկայացրեց Օդեսայի ջարդերի և ռուս մարդկանց դաշնակցութեան վարչութեան հովանաւորելու առիթով մի հարցապնդում:

Անդրկասպեան շրջանի կողմից Պետական Դումայի անդամ ընտրվել է գիւղացի սօցիալ-դեմօկրատ Միրօնովը:

Պետական Դումայի անդամներ ընտրվել են. Ասխաբադում, տեղացիների կողմից փոխ-գնդապետ Մակդամ Կալիխանը՝ անկուսակցական, Սամարկանդի շրջանից—Աբդուլահ-Խալիլեվ, անկուսակցական, առևտրական, Ֆերգանի շրջանից—Դրուկար մեքենավարի օգնական, սօց.-յեղափոխ. տեղացիներից—Մուհամէդժանով, վաճառական, անկուսակցական:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Սահմանադրական նորմալ կեանք վարող երկրներում իւրաքանչիւր ընտրութիւն համեմատաբար քիչ է վերանորոգում պալատի անդամների կազմը: Պատգամաւորների մեծ մասը վերընտրվում է յաջորդ պարլամենտի համար, և նոր պարլամենտում սակաւ են լինում նոր անդամներ: Մեզանում այդպէս չէ: Իր կազմով երկրորդ Պետական Դուման շատ քիչ է նման առաջինին: Առաջին Դումայի պատգամաւորներից 30 հոգու միայն աջողվել է երկրորդ անգամ պատգամաւոր վերընտրվել: Իսկ միւսները չեն կարողացել այս անգամ ընտրվել. ոմանք քրէակ. օրէնսդ. 129-րդ յօդ. հիման վրա զրկվել են ընտրողական իրաւունքից, ուրիշները չեն ընտրվել սենատի «մեկնութիւնների» շնորհիւ, շատերն էլ, վերջապէս, աջողութիւն չեն ունեցել զանազան պատահականութիւնների շնորհիւ, որոնցով տեմը: Երկրորդ Դումայի անդամները ահագին մեծամասնութիւնը բաղկացած է այնպիսի մարդկանցից, որոնք ռուսաց հասարակութեան լայն խաւերին համեմատաբար քիչ են ծանօթ: Իրաւ է, նրանցից շատերը անցեալում քիչ տարիներ չեն գործել քաղաքական ասպարէզում, բայց ռուսական պայմաններում այդ աշխատանքը առանձին հեղինակութիւն չէր ստեղծում, այլ հասնում էր բանտի կամ աքսորի: Դրա փոխարէն ռուսաց պատգամաւորները անձնական փորձերից հիմնաւորապէս ծանօթ են բանտերի ու աքսորի հետ: Ոչ միայն սօց.-յեղափոխականների կամ սօց.-դեմօկրատների շրջանում, որոնց կենսագրութեան մէջ աւելի կամ պակաս չափով բանտային մշտական տառապանքը, համարեա, անհրաժեշտ սեփականութիւն է դարձել, այլև կադետների թւում կան այնպիսի մարդիկ, ինչպէս Վօրօնեժի պատգամաւոր Դ. Ա. Պերեխօշինն է, որ երկու տարուց աւելի անց է կացրել Պետրօպաւլօվսկի բերդում և ապա մի քանի տարով ուղարկված է եղել Սիբիր:

Ինչպէս էլ լինի, յամենայն դէպս նոր պատգամաւորներից շատերին հասարակութիւնը քիչ է ճանաչում և պարզ բան է հետաքրքրութեամբ է վերաբերվում դէպի այն պատգամաւորները, որոնք առաջարկվում են Դումայի կազմի համար կամ որոնք պէտք է ղեկավարող դեր խաղան Դումայի մէջ ներկայացված բազմաթիւ կուսակցութիւնների համար:

Ամենից աւելի հարուստ է «անուններով» սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը, որ չը մտաւ անլեգալ դրութեան մէջ և որի անդամները հնարաւորութիւն են ունեցել ցոյց տալ իրանց գրականական ասպարէզում, տեղական ինքնավարութիւնների մէջ, մըստավային ընդհանուր ժողովներում, պրօֆեսօրական ամբիոնների վրա, և այլն: Ի հարկէ, կադետների համար էլ էր դժուար փոխարինել առաջին Դումայի այնպիսի գործիչներին, ինչպիսին էր Ս. Ա. Մուրոմցեվը, Ի. Ի. Պետրունկեւիչը, Մ. Ե. Հերցենշտէյնը, և այլն, բայց և այնպէս այդ կուսակցութիւնը չէ կարող գանգատվել, որ վատ ներկայացուցչութիւն ունի նոր Դումայում: Հին պատգամաւորներից վերընտրվել են 11 հոգի, որոնց թւում սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը ունի այնպիսի յայտնի հասարակական գործիչներ, ինչպիսին է Պ. Դ. Դօլգօրուկօվ, Ֆ. Ա. Գօլօվին, Ա. Ա. Կիզեվետտեր, Պ. Դ. Ստրուվէ, Ի. Վ. Հեսսեն, Վ. Մ. Հեսսեն, Վ. Ա. Մակլակօվ, Ն. Վ. Տեսլենկօ, Ն. Ն. Կուտլեր, Ս. Ն. Բուլգակօվ, Ա. Ա. Ստախօվիչ, Ն. Մ. Իօրդանսկի, և ուրիշները: Դումայի կադետ պատգամաւորների մէջ կան առաջնակարգ ճառախօսներ, լաւ իրաւաբաններ և տնտեսագէտներ, հասարակական աշխատանքների մէջ յայտնի հմտութիւն ունեցող անձինք, և այդ բոլորը երաշխաւորութիւն է, որ կադետները շատ աչքի ընկնող դեր են խաղալու Դումայում: Նրանք իրանց թւական քանակութեամբ էլ կարող են յոյս տածել դրա համար. կադետ պատգամաւորների թիւը հասնում է 115 հոգու: Կրթական ցենզով էլ կադետները Դումայում բարձր են կանգնած միւս բոլոր կուսակցութիւններից. նրանց մեծ մասը բարձր կրթութեան տէր մարդիկ են:

Սահմանադիր-ռամկավարների ձախ հարեւանները—այն է աշխատաւորները, խիստ կերպով տարբերւում են առաջիններից իրանց անձնական կազմով: Աշխատաւորների ահագին մեծամասնութիւնը բաղկացած է գիւղացիներից, որոնք մինչեւ այժմ առիթ չեն ունեցել իրանց գործունէութիւնը երեւան հանելու: Աշխատաւորների խմբակի մէջ մտնող ինտելլիգենցիան գլխաւորապէս երրորդ տարրերից է բաղկացած: Նրանց մէջ ամենաաչքի ընկնողն է Սամարայի պատգամաւոր Բերեզինը և Եկատերինոսլաւի պատգամաւոր Ա. Լ. Կարաւլովը, որոնք և ներկայումս խմբակի գլխաւոր ղեկավարներն են համարւում: Երկուսն էլ միջին տարիքի մարդիկ են. Բերեզինը մաթեմատիկ է և վերջացրել է Կազանի համալսարանը, նա յայտնի է իբրև ստատիստիկ և մասամբ էլ գրող: Իսկ Կարաւլովը բժիշկ է: Երկուսն էլ հալածանքների են ենթարկվել ադմինիստրացիայի կողմից:

Սոց.-դեմոկրատական ֆրակցիան Դումայում իր կազմով մօտ է աշխատաւոր խմբակին, միայն այն տարբերութեամբ, որ գիւղացի պատգամաւորների տեղերը սոց.-դեմ. մօտ գրաւել են բանւորները: Ինտելլիգենտ սոցիալ-դեմոկրատների թիւը Դումայում շատ չէ, եղածներն էլ մեծ մասամբ աննշան երիտասարդներ են, որոնք քաղաքական հանգամանքների շնորհիւ հնարաւորութիւն չեն ունեցել աւարտելու բարձրագոյն դպրոցները: Այդ ինտելլիգենտների մեծ մասը կովկասցիներն են և այդ հանգամանքն էլ ապահովում է փոքրամասնականների գերակշռող դերը Դումայի ֆրակցիայում: Մեծամասնականներից ֆրակցիայի կօմիտետի մէջ մտել է միայն Պետերբուրգի պատգամաւոր Ալեքսինսկին, որ թէև ընտրվել է բանւորական կուրիայի կողմից, բայց իսկապէս բարձր կրթութիւն ստացած անձնաւորութիւն է: Փոքրամասնականներից ֆրակցիայի կօմիտետի մէջ մտել են Կովկասեան պատգամաւորներ Ծերեթելի, Ջափարիձէ, Միտրօվ և Նիրիէնկօ, բոլորն էլ ուսումը կիսատ թողած ուսանողներ: Ոչ միայն ինտելլիգենտները, այլև բանւորները երիտասարդներ են, մեծ մասամբ 30 տարեկանից ցածր, այնպէս որ համակով սոց.-դեմոկրատական ֆրակցիան ամենաերիտասարդն է Դումայում: Սոց.-դեմոկրատական ֆրակցիայի թիւը, առայժմ հաւասար է աշխատաւոր խմբակին, այն է մօտ 50 հոգի:

Սոցիալիստ յեղափոխականները ներկայումս աւելի քիչ են կազմակերպված, քան սոց.-դեմոկրատները կամ աշխատաւորները: Մինչեւ այժմ էլ մամուլի մէջ որոշ տեղեկութիւն չը կայ սոց.-յեղափ. ոչ թւի մասին Դումայում, ոչ էլ ֆրակցիայի ղեկավար մարմնի մասին. հաղորդված էր միայն, որ կօմիտետի նախագահն է Ֆոքրուսովը, 36 տարեկան, բժիշկ, աւարտել է զինուորական բժշկական ճեմարանը, քանիցս անգամ աքսորվել է Պետերբուրգից, ուր նա ապրում էր: Բոլորովին պատահաբար սոց.-յեղ. խմբակը Դումայում հարուստ է բժիշկներով, որոնց թիւը հասնում է 6-ի:

Ժողովրդական-սոցիալիստները թէև չեն կարող պարծենալ, որ մեծ թիւ են ներկայացնում [illegible] ժողովրդական-սոցիալիստ կուսակցութեան պարագլուխը չը կարողացաւ ընտրվել, այնուամենայնիւ կուսակցութիւնը կարող է գոհ մնալ իր ներկայացուցչութեամբ Դումայում: Նրա ֆրակցիայի մէջ մտնում է զեմստվոյի երիտասարդ ամենալաւ ստատիստիկներից մէկը Գ. Բասկինը, որ աւարտել է Պետրովսկի ակադեմիան, յայտնի երդուեալ-հաւատարմատար Ա. Դեմենտիեւը, Չերնիգովի զեմստվային գործիչ Վ. Վօլկ-Կարաչևսկին և ուրիշները:

Մի կողմ թողնելով դեմոկրատական բարենորոգումների կուսակցութիւնը, որի միակ ներկայացուցիչն է յայտնի Վ. Կուզմին-Կարաւաեւը, և անկուսակցական չափաւորներին, մենք կարող ենք ուղղակի դիմել աջակողմեան կուսակցութիւններին:

Հոկտեմբերի 17-ի դաշնակցութիւնը չը նայելով նպաստաւոր հանգամանքներին, որ հնարաւորութիւն էին տալիս նրանց ցոյց տալու իրանց ընդունակութիւնները, այնուամենայնիւ ոչ մի փայլուն անուն չունի Դումայում: Բացի Մ. Ա. Ստախովիչից, որը, ինչպէս երեւում է, նորից է վերադարձել դաշնակցութեան գիրկը, աչքի ընկնող դէմք է ներկայացնում յայտնի զեմստվային գործիչ Խոմեակովը, որ վերջին ժամանակներս Պետական Խորհրդի անդամ էր ընտրվածներից և Կիեվի պրոֆեսսոր Ռէյն, որ մեծ հռչակ է վայելում, իբրև լաւ ակուշօր, բայց ոչ իբրև քաղաքագէտ: Աւելի վառ կերպով է ներկայացված ծայրայեղ աջակողմը, որի անդամների թւում են գտնվում Կրուշեւան, Պուրիշկեվիչ, Պլատոն եպիսկոպոսը, որոնց կարելի է ուրիշ որեւէ բանից զրկել, բայց ոչ հռչակից և քաղաքական որոշ համբաւից: Այդ պատգամաւորների ջարդաբանական համբաւը միանգամայն հիմնաւոր կերպով է կազմվել, և դրան իբրև բնորոշ փաստ կարող է ծառայել հասարակութեան վերաբերմունքը դէպի այն, որի շնորհիւ Կրուշեւանը ստիպված էր Դումա գնալ ժանդարմների ուղեկցութեամբ: Աջակողմեանների ընդհանուր ույժը շատ էլ մեծ չէ, և ինչպէս ցոյց տուեց Պետ. Դում. նախագահի ընտրութիւնը, 90—100 հոգի է: Թէ ինչպէս են բաժանվում այդ ույժերը աջակողմեան կուսակցութիւնից իւրաքանչիւրի վրայ, այսինքն, հոկտեմբերեանների վրա, որոնք սահմանադրութիւնը ընդունում են խօսքով միայն և միապետականների վրա, որոնք բացասում են սահմանադրութիւնը ոչ միայն գործով, այլ և խօսքերով, առ այժմ յայտնի չէ: Միեւնոյն պատգամաւորները լրագրներում մի տեղ կոչվում են հոկտեմբերեաններ, իսկ մի ուրիշ տեղ միապետականներ:

(«Р. В.»)

ՋԻՒԱՆՇԻՐԻ ԳԱՒԱՌԻՑ

I

Առաջաձոր փետրվարի 17-ին

Ջիւանշիրի լեռնավայրերում՝ օրինակ Խաչենի և Թառթառի ձորակներում սովը օրից օր մեծ ծաւալ է ստանում: Դժուարութեամբ կարելի է Ջրաբերդից (Ջիւանշ.-գաւ.) ցորեն, կորեկ և գարի ճարել, գնելու համար, այն էլ չուալը (7 փութ) 12 ½—13 ռուբլով. բացի այդ վճարից, 2 ռուբլի էլ պէտք է քրեհատբին տալ՝ մի չուալ ցորենը Ջրաբերդից Խաչենի կամ Թառթառի ձորակները բերելու համար: Ցիշեալ ձորակներից մի օրում գնում են Ջրաբերդը, միւս օրը վերադառնում: Պարզ է, որ յիշեալ ձորակների բնակիչները իրանց չունենալով ուտելու հաց ու վերջինից գնելու միջոց, փչացրել և կամ ծախել են իրանց ուլաւները (ձիերը, էշերը): Համեմատաբար ցորենի հետ թանգ են հացահատիկները: Գնելու համար ճարվում է և Ռուսաստանի ալիւր «մեշօկներում», որի փութը ծախվում է 2 ր. 30 կ.—2 ր. 40 կ.: Դժբախտաբար դրամական միջոց չը կայ գնելու կամ ալիւր կամ ցորեն, կորեկ ու գարի: Եւ ուրեմն հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն վերոյիշեալ ձորակների ազգաբնակութեանը՝ թէ հացով և թէ փողով, թէ չէ ձեռքից ընկնում են Ջիւանշիրի լեռնաբնակները... Սրանով հրաւիրում եմ շտապ ուշադրութիւնը բարեգործական հաստատութիւնների ու ունեւոր և բարի մարդկանց:

II

Սրանից մի քանի օր առաջ, երբ մեր գաւառի Առաջաձոր գիւղացի՝ երեք անձնաւորութիւններ՝ Թ. Գաբրիէլեանը, Ա. Ցակոբջանեանցը ու Ի. Բաղդասարեանցը, երկու քրիստոնեաների հետ՝ առաջաձորցի Սարու Ցովսէփեանի (զուլայ) ու քեաուսկեցի (Շուշ. գաւ.) Գրիգոր Ասլանեանցի, Շուշից վերադարձած գալիս էին տուն (առաջին երկուսը ինչպէս II-րդ կարգի վաճառականներ, ծախելու համար ապրանք էին բերում Շուշից, իսկ երրորդը իր հարսանիքի համար իրեր), ռուս գաղթականների՝ «Սուոմինսկ» անուանեալ գիւղով անցնելիս, մի կոզակ՝ ալկոհոլիզմի ազդեցութեան տակ (կոզակը լինում է արխալուղով առանց չուխի) յարձակվում է այդ անմեղ անցորդների վրա և բացի նրանց հայհոյելուց, սկսում է անխնայ ծեծել, ասելով թէ ինչու չեն այդ հայերը երթեւեկում իրանց ճանապարհով: Անզէն ու անպաշտպան հայերը ինչքան ուզում են հաւատացնել, որ իրանք միշտ այդ ճանապարհով են երթեւեկել և ինչքան խնդրում են իրանց արձակել, սակայն հարբած կոզակը չէ լսում նրանց աղերսանքին ու աղաչանքին և շարունակում է ծեծել... «Սուոմինսկ» գիւղի ռուս մուժիկները գոնէ չեն օգնում, չեն ազատում անմեղ հայերին հարբած կոզակի ձեռքից: Նրանք կամ թամաշայով են զբաղված լինում և կամ յիշեալ գիւղում տեղի ունեցած հարսանիքով...

Տեսնելով, որ կոզակը չէ դադարում իրանց ծեծելուց, հայերից մէկը՝ Ի. Բաղդասարեանցը, իջնելով ձիուց, բռնում է կոզակին և քաղաքավարի խնդրում, որ դադարէ, բաւական անէ և հրամայէ, ինչքան որ անմեղի ծեծել է իրանց՝ անմեղներին: Սակայն կոզակը ուզում է դաշոյնը հանել ու Բաղդասարեանցին կտոր-կտոր անել: Բաղդասարեանցը շտապում է կոզակին վայր գցել, և չոքելով նրա կրծքին՝ խլում է դաշոյնը: Օգտվելով հանգամանքից՝ թէ Բաղդասարեանը և թէ իր միւս հայ վերոյիշեալ ընկերները շտապում են փախչել, որպէսզի մի կերպ ազատվեն նրանից, իսկ հարբած կոզակը վազում է փախչող հայերի յետևից բացականչելով. «Помагите по- [illegible] քանի մուժիկներ, բռնկվում են հայերի վրա, ասելով թէ ինչու նրանք խլել են կոզակի դաշոյնը: Հայերը հաւատացնում են նրանց, որ կոզակը հարբած լինելով կոտորում էր իրանց, անմեղներին, ուստի իրանք խլել են դաշոյնը, որ վերջինս պահ տան մի բարի ռուս մարդու և նրան խնդրեն, որ իրանց ազատէ հարբած կոզակից: Այդ ասելով՝ դաշոյնը տալիս են մի ռուս մուժիկի և խնդրում՝ որ կոզակին չը տայ այդ դաշոյնը և բացի այդ սանձահարէ հարբած կոզակին: Եւ ապա այդ բոլորից յետոյ շտապում են շարունակել ճանապարհը: Հարբած կոզակին աջողվում է իր ճանկը գցելու իր դաշոյնը և այդպիսով կատաղած վազում է հայերի հետևից:

Հայերը շտապում են փախչել և բաւականին հեռանալով «Սուոմինսկ» գիւղից, ուրախանում են, որ թէկուզ անտեղի ծեծվեցին, այնուամենայնիւ ազատվեցին խուլիգանից, բայց աւա՜ղ իրականանում չեն նրանց յոյսերը, մտածմունքները, ուրախութիւնները... հայերը մէկ էլ են տեսնում, որ իրանց հետևից հասուսհաս մի մեծ զինված ամբոխ է գալիս, բաղկացած ձիաւոր կոզակներից ու մուժիկներից. վերջիններիս ձեռներին լինում են բահեր, մեծ փայտեր, և այլն: Թ. Գաբրիէլեանը և Ի. Բաղդասարեանը իջնելով ձիերից, թողնում են գրաստները (բեռնաւոր ձիանքը) ու շեղվելով ճանապարհից, փախչում են դէպի մերձակայ ծմակը, իսկ Ա. Ցակոբջանեանցը, տեսնելով որ իր խանութային ապրանքի բեռը քանդվել է և բացի այդ տեսնելով, որ չարամիտ ամբոխը մօտեցել է իրան, յիշեալ երկու քրիստոնեաներով չէ փախչում, այլ հաւաքելով ցրված ապրանքը, նորից բեռնում էշերը: Ամբոխը հասնելով, ձերբակալում է Ա. Ցակոբջանեանցին և յիշեալ երկու քրիստոնեաներին՝ Սարու Ցովսէփեանցին (առաջաձորեցի) և Գրիգոր Ասլանեանցին (քեաուսկեցի) ու նրանց ծեծելով գրաստների հետ քշում են դէպի «Սուոմինսկ» գիւղը (գրաստների թւում լինում են և փախածների՝ Թ. Գաբրիէլեանցի ու Ի. Բաղդասարեանցի գրաստները): Քրիստոնեաներից մէկին՝ Գրիգոր Ասլանեանցին՝ վերոյիշեալ հարբած կոզակը դաշոյնով ծանր վիրաւորում է գլխից և մարմնի զանազան տեղերից, որը այժմ սաստիկ պառկած հիւանդ է: «Սուոմինսկ» գիւղում, թէ ինչպէս են չարչարում, տանջում ու «խան-գիւանի» անում անմեղ հայերին, աւելորդ եմ համարում նկարագրել, միայն այն կաւելացնեմ, որ մուժիկները ու այդ բարբարոսութիւններին մասնակցող չորս կոզակները իրանց քստմնելի գործը կատարելուց յետոյ առաջարկում են հայերին հաշտվել կոզակների հետ, սպառնալով որ հակառակ դէպքում հայերի բանը վատ կանցնի և ի միջի այլոց ասելով, թէ ինչու հայերը իրանց նոր շինված (Գանձակ-Շուշի խճուղով) ճանապարհով չեն երթեւեկում, աւելացնելով, որ հայերը իրանց (ռուսների) ատաւարը գողանում են և դրա համար է, որ իրանց գիւղում կոզակներ են դրել, ինչպէս պահապաններ, որոնք պէտք է արգելեն հայերին անց ու դարձ անելու յիշեալ ռուսի գիւղով..: Հայերը յայտնում են, որ իրանք իրանց կողմից համաձայնվում են հաշտվելու կոզակների հետ. «Ի՞նչպէս եք հաշտվում», ասում են կոզակները. «պէտք է համբուրվէք մեզ հետ և»... «Եկէք համբուրվենք», ասում են հայերը: «Միայն համբուրվելով բան չի լինի ոչ, ոչ... մեզ հարկաւոր է փող... փող... թէ չէ»... ասում են կոզակները: Հայերը յայտնում են, որ իրանք իրանց մօտ եղած փողը ծախսել են Շուշում, խանութային ապրանք գնելով և ի միջի այլոց Ա. Ցակոբջանեանը աւելացնում է, որ ինքը վաճառական լինելով միշտ օգուտ է տալիս պետական գանձարանին, իսկ պետական կոզակները իրան այդպէս անպատւում են: Այդ ասելով Ցակոբջանեանցը քրիստոնեաների մօտ գտնված սև փողերն և իր մօտ եղած վերջին կոպէկները, վեց ռուբլու քանակութեամբ, ուզում է տալ կոզակներին, երդվելով, որ դրանից զատ ոչինչ չունին: Կոզակները չեն վերցնում փողը՝ ասելով որ, քիչ է և աւելացնելով որ հայերը խաբում են իրանց՝ փողի վերաբերեալ...

Դրանից յետոյ կոզակները հայերին գրաստներով առաջներն են գցում ու ծեծելով քշում դէպի Խանքենդ աւանը, երբ թէ ներկայացնելու իրանց մեծին, ինչպէս յանցաւորների, թէ ինչու համար չը գիտեմ... Պարզ է, որ կոզակների այդքան «հռովլ-կետը» փողի համար է լինում...: Կէս ճանապարհին, կոզակները տեսնելով, որ հայերից աւել փող չէ դուրս գալիս և մտածելով, որ իրանց պրովօկացիական յօրինած ու հնարած ստերը այդ անմեղների դէմ, կարող են չարդարանալ, չիրագործվել և որ այդ անմեղ հայերը արդարանալուց յետոյ, իրանք կոզակները կարող են պատժվել, այդտեղ վերջին հրամանը տալիս են հայերին: Այնպէս խլում են նրանց մօտ գտնված փողը, թալանում են բեռների երեսից և ապա սկսում են ծեծել անխնայ...: Այդ դրամաները կատարելու ժամանակ, հեռուից լսվում են մարդկանց ձայներ. կոզակները մտածելով, որ այդ անձինքը շուտով կը գան դէպքի տեղը ու վերջը կարող են վկայութիւն տալ՝ ապացուցանելով իրանց բարբարոսութիւնները, թողնում են հայերին և իրանք անհետանում: Արիւնաշաղախ հայերը վերադառնում են տուն և գանգատ չեն գիտեմ: Ի՞նչ անուն տալ այդպիսի վարմունքին...:

P. S. Կոզակները այդ չարագործութիւնը կատարում են այն ժամանակ, երբ թուրքերը Աղդամի մօտերքին սպանել էին մի ռուս ստրաժնիկի ու փոխ-գնդապետ Զոլոտարեվին:

Լսելով, որ թուրքերը ստրաժնիկին սպանել են երեկոյեան՝ Աղդամի մօտ գտնվող «Ղարադաշ» անուանեալ տեղում, որի դիակը թուրքերը ուղարկում են «Խօջալու» կայարանը, իսկ յիշեալ փոխ-գնդապետին միեւնոյն թուրքերը սպանում են միեւնոյն օրվայ գիշերը և միեւնոյն տեղում, յոյժ կարևոր եմ համարում դիմել բարի խորհուրդներով թուրք եղբայրներին՝ յանձնել իշխանութեան ձեռքը՝ իրանց մէջ գտնվող խուլիգաններին, որը պարտաւոր ենք անելու և մենք, ասպարէզը մաքրելու համար...: Չէ՞ որ պարզ ջուրը պղտորողները այդ խուլիգաններն են... Չէ՞ որ ամեն մի չարիքի, մանաւանդ արիւնահեղ դէպքերի, ընդհարումների պատճառը այդ խուլիգաններն են:

ԵՐԵԿՈՅԹ ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ

Պետերբուրգ, փետրվարի 19-ին

Տեղիս գաղութի բարձր շրջանից կազմված կանանց կօմիտէտը բացի մասնաւոր հանգանակութիւնից վաղուց մտադիր էր կազմակերպել մի երեկոյթ. այդ երեկոյթը տեղի ունեցաւ փետրվարի 18-ին «Благородное собраніе» դահլիճում, կայսերական թատրոնների երգիչների մասնակցութեամբ. դահլիճը մասամբ լի էր հանդիսականներով. գլխաւորապէս ներկայ էր հայ բուրժուազիան և ուսանողութիւնը. օտարները քիչ էին: Դահլիճին կից օթեակներում տ. տ. Ղուկասեան, Նազարեան, Տիգրանեան, Ասրիեւեան և այլք ուրախութեամբ յանձն առնելով որեւէ մի մասի կառավարութիւնը՝ վաճառում էին երեկոյթի ծրագիրը, ծաղիկներ և շամպայն: Բարձրացաւ վարագոյրը և բեմի վրա երևաց հայ ազգի յայտնի ջութակահար Յով. Նալբանդեանը, որը և երեկոյթի կարգադրիչներից մէկն էր. հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ ընդունեց նրան. նա գեղեցիկ նուագեց Вьетана-ի Rêverie, Cañasame-ի Habanera, իսկ ծրագրից դուրս Abtorne-ի Oriental-ը. ապա երգեց օր. Ս. Աբրահամեանը, որը սովորում էր կոնսերվատորիայում. վերջին տարիներս մի քանի անգամ բեմ է դուրս եկել և խոստանում է ապագայում աջողութիւն: Օրիորդը երգեց Չայկովսկու «Ночи безумныя», «Արի իմ սոխակը» և ուրիշ կտորներ, որի համար արժանացաւ ծափահարութեան. շատ գեղեցիկ և հմայիչ կերպով երգեց կայսերական թատրոնի երգչուհի Նաւիլսկայան Չայկովսկու «Средь мрачныхъ дней» և բուռն bis-երին երգեց մի քանի ուրիշ կտորներ էլ, որի համար նա ստացաւ ծաղկեայ փունջ: Կայսերական թատրոնի երգիչ Դարսկին պարզ և սահուն արտասանեց Майковъ-ի «Клершантскій соборъ», որը բաւական երկար մի ոտանաւոր է, ուր կաթոլիկները վրէժ ու պատերազմ են յայտարարում մահմեդականներին: Կայսերական թատրոնի երգիչ Տարտակովը երգեց Ղորղանեանի «Персидская пѣсня». բայց ամենից հրաշալի տպաւորութիւն թողեց квартате-ն՝ բաղկացած կայսերական թատրոնի երգիչներից՝ Чупрыниковъ, Сафоновъ, Лосовъ и Косторскій, որոնք երգեցին «На сѣверѣ дубъ одинокія», «Тройка» և այլ կտորներ, որոնք հասարակութեանը մեծ բաւականութիւն պատճառեցին:

Ապա տեղի ունեցաւ Балетный дивертисментъ ը և կայսերական թատրոնի բալետուհիները Преображенская և Кякштъ-ը պարեցին մի քանի պարեր: Դրանից յետոյ ցոյց տրվեցին կենդանի պատկերներ, որոնց կազմել էր նկարիչ Վ. Սուրէնեանը: Առաջին պատկերը ներկայացնում էր հայկական կեանքից վերցրած աշուղը աղբիւրի մօտ. հայ կանայք Ախալցխայի հագուստով գալիս են ջուր վերցնելու, նստում են աշուղի շուրջը և լսում նրան: Բ-դ պատկերը Արտաշէս թագաւորի և Սաթենիկի պատմութիւնից էր վերցրած. շատ գեղեցիկ և մեծ հոգածութեամբ էին կազմած կենդանի պատկերները. տեղի ունեցան բեմի վրա կովկասեան պարեր և յետոյ դահլիճում կովկասեան և եւրոպական պարեր մինչև գիշերվայ ժամի 3-ը: Ընդհանուր մուտք կարող է լինել մօտ 3000 ր: Շնորհակալութեան արժանի են կազմակերպող յարգելի տիկինները և պարոնները, որոնք ոչ մի ջանք չէին խնայել երեկոյթը հետաքրքիր դարձնելու համար:

Շահրիմեան

ՄԱՄՈՒԼ

Մայրաքաղաքի մամուլը ներկայումս քննութեան նիւթ է դարձրել այն հարցը, թէ ինչպէս գործել, որպէսզի երկրորդ Դումայի գոյութիւնը երկարատեւ լինի և բեղմնաւոր: Առաջին գրաւականը դրա համար կարող է լինել օպպօզիցիայի համերաշխութիւնը: Ձախակողմեան լրագիրները զբաղված են օպպօզիցիոն կուսակցութիւնների յարաբերութիւնը լուսաբանելու, կանոնաւորելու հարցով: Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան օրգան «Русская Жизнь» լրագիրը գրում է.

Ձախակողմեան կուսակցութիւնների ներկայացուցիչներից՝ բացի կադետներից՝ մշտական անկուսակցական բիւրո կազմելու մտադրութիւնը իրապէս ոչ այլ ինչ է, բայց եթէ Դումայում հակա-կադետական մի բլոկ կազմել ձախակողմեաններից: Փաստօրէն, այն ժամանակ, փոխանակ ինֆորմացիոն բիւրոյի, մենք քաղաքական տակտիկայով օպպօզիցիայի մի մասը միացնում ենք ընդդէմ միւս մասի, որը չէ կարող պահանջել ոչ պրօլետարիատի դասակարգային կուռ կարիքները, ոչ էլ նրա զուտ դեմօկրատական նպատակները: Այդ ոգով էլ որոշում է կայացրված սոց.-դեմօկրատական ֆրակցիայի նիստում: Ֆրակցիան, որոշելով այդպիսի մշտական բիւրո կազմելու գործին չը մասնակցել, հարկաւոր է համարում միայն ֆրակցիայի իւրաքանչիւր համապատասխան որոշումների մասին տեղեկացնել օպպօզիցիոն բոլոր կուսակցութիւններին: Իսկ այն երկու դէպքերում, երբ ֆրակցիան արդէն ստիպված եղաւ բանակցութիւն վարել միւս կուսակցութիւնների հետ (Դումայի նախագահի, փոխ-նախագահի ընտրութեան ժամանակ թեկնածու չառաջարկելու և Գօլուբեւի ճառի ընթերցմանը ներկայ չը լինելու մասին), նա որոշեց տեղեկացնել և խորհրդակցել օպպօզիցիոն բոլոր կուսակցութիւնների հետ անխտիր, այլ ոչ միայն յեղափոխական կուսակցութիւնների հետ, այսինքն, կադետների հետ ևս: Այդ որոշումը ապացոյց է, որ սոցիալ-դեմօկրատական ֆրակցիան հէնց առաջին քայլափոխից սկզբունքային ինքնուրոյն դասակարգային քաղաքականութիւն ընտրեց, և որ առաջին բլոկը Դումայում ևս շարունակելու և կադետների դէմ կռիւ մղելու համար դեռ վաղաժամ է համարվում: Սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան կը մնայ պրօլետարիատի դասակարգային կուսակցութեան ներկայացուցիչը և ոտք չի դնիլ ձախակողմեան բլոկի սայթաքուն հողի վրայ:

Այն ժամանակ, երբ սոց.-դեմօկրատիայի «փոքրամասնական» ֆրակցիան կանգնում է իրականութեան անխուսափելի ճանապարհի վրա, ըմբռնում է մօմենտի անհրաժեշտ պահանջը, «մեծամասնականները» ընդհակառակը իրանց ույժերը կենտրօնացնում են կադետների դէմ և այդպիսով թուլացնում օպպօզիցիայի կռիւը: Մեծամասնականների օրգան «Новый Лучъ» լրագիրը այնքան կոյր [illegible] թիւնը, որ թոյլ է տալիս ենթադրել, թէ «կադետները արդէն վճռել են հաշտվել «Միլիւկօվ-Կառլբարսի մինիստրութեան հետ», իսկ Դումայի տակտիկայի վերաբերմամբ հետեւեալ խորհուրդն է տալիս.

Դումայի տեխնիքայի երկրորդական խնդիրների վրա չէ որ պէտք է ուշադրութիւն դարձնել: Այն վատթար ու գծուծ գիտունները, թէ ինչպէս կուչ գալ, լաւ ու առիթ չը տալ Դուման ցրելու, չը զայրացնելու Ստոլիպինին և ընկ.,—կադետական այդ վատթար գիտունները չը պէտք է զբաղեցնեն դեմօկրատին: Իր ամբողջ ուշքը, իր զէնքն ամբողջ կորովը նա պէտք է ուղղէ ամրապնդելու այն շաղկապը, որ միացնում է ներքին զօրեղաշարժ մեծ անիւը վերևի անիւի հետ:

Զարմանալի չէ ուրեմն այն պառակտումը, որ ներկայումս տիրում է ռուսաց սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան շարքերում: Տակտիկական այդպիսի առաջնակարգ հարցերի առիթով ծագած այդքան խոշոր հակասութիւն անկարելի է իրար հետ հաշտեցնել և բնականաբար վերջնական պառակտումը անխուսափելի է:

*

Թիֆլիսում մի շաբաթից ի վեր տարածված է դաշնակցութեան Զինուորական Խորհրդի մի թռուցիկը, որ, կրճատումներով առաջ ենք բերում այստեղ.

Դաշնակցութեան նախկին չէֆերը մնացած մենակ, որպէս անշնորհք գեներալները առանց զինուորների, մի քանիսին խաբելու և հասարակութեանը մոլորեցնելու համար, օր չի անցնում որ իրանց վայնասունը չը բարձրացնեն մէկ մէկ յուսահատիչ լուրերով. գլուխները կորցրել են:

Անձնազոհ ու ինքնամոռաց հայ զինուորներին էլ ենիչերի, էլ խուժան, էլ ղուլդուր, էլ չեմ իմանում ինչ զզուելի ածական մնաց, որ չը կպցնէին խեղճ ու միամիտներին, շնորհակալութեան ու երախտապարտութեան փոխարէն, այն հասարակութիւնից, որի պաշտպանութեանն էին նուիրել իրանց կեանքը:

Միթէ արժանի էին զինուորները դրան. մենք կը պատասխանենք ոչ երբեք, բայց և կասենք նոյն ժամանակ, որ հասարակութիւնը արդարացի էր իր մեղադրանքների մէջ:

Բայց, հարց, ով էր մեղաւորը. ինչու չը պարզեցին, ինչու չը պաշտպանեցին, ինչու պարզ զինուորին համարեցին հասարակութեան ամենաստոր տականք:

Այդ հարցի պատասխանը շատ կարճ է. մեղաւորը Դաշնակցութեան նախկին մինչև ոսկրի ծուծը փչացած, բիւրոկրատացած մեծ կարիք ունեցող փառք չէֆերն էին (բացառութիւնը մեզ համար մինչև օրս էլ յարգելի են): Երբ և ուր դրանք բարձրացրին հայ ժողովրդի գիտակցութիւնը. երբ և ուր դրանք գաղափարական պրոպագանդ մղեցին զինուորների մէջ. ինչ անէր կոյր գործիք դարձած բիւրոկրատ չէֆերի ձեռքին միամիտ զինուորը, էն էլ կռիւների ամենախիստ դիսցիպլինայի այն օրերին, եթէ ոչ ենթարկվէր նրանց բոլոր անխիղճ հրամաններին անխտիր:

Երբ գիտակից զինուորները թքեցին ու հեռացան ռամկակալ իրանց շահագործող և իրանց անունը կեղտի հետ հաւասարեցնող սիւնլերը չէֆերից, յատակութիւն ունեցան թող փչել միամիտ հասարակութեան աչքերին և զուռացին ի լուր աշխարհին. հիմա էլ բիւրոկրատացնում ենք մեր զինուորներին:

Ինչու մինչև օրս, հեռացած, բայց կեառքայց մօտ 3000 զինուորների մէջ ոչ մի ենիչերական քայլ չի եղել, այլ շարունակում են իրանց սրբազան պարտականութիւնները ամենայն համբերութեամբ. միթէ սա փաստ չէ, որ ենիչերները այդ չէֆերն են:

Քաղաքացիներ և ընկերներ, այո, մենք էլ ձեզ հետ միասին հաստատում ենք և գտնում, որ ղուլդուրներն էլ, ենիչերներն էլ, խուժանապետներն էլ յայտնի չէֆերն են և այդ մակդիրները դրանց, միմիայն դրանց է արժանի: Հասարակական անբիծ ու սրտացաւ գործիչների գլխին մինչև օրս չեն դադարում շարունակ ամենաանբարոյական զրպարտութիւնների հեղեղը թափել պատուախօսօրէն. դեռ ևս իրենց հաւատարիմ ու արժանի մէկ ու կէնտ պնակալէզ ագէնտների միջոցով, բաւ վաղեմի, իհարկէ ոչ բիւրեղացման, թէ բիւրեղացման ոտւած հրահանգների և անուանում նրանց մատնիչ ու դաւաճան. բայց միևնոյն ժամանակ իրենք անում են ֆորմէնիյ դաւաճանութիւն և բուռ փաստերի գլուխները կոխում փոսը, հաւատալով որ իրենց աւած մէջքը ոչ ոք չի տեսնում:

Ընկերներ և քաղաքացիներ, տխրահռչակ չէֆերը զգալով, որ իրենց զուլդուրացրած լրբերի ձեռքերով կատարած մեր ընկերոջ վերաբերմամբ մի սերբորիք յետոյ անկարող են այլ ևս շարունակել, որի վերաբերմամբ հրաւիրուած դատից տմարդօրէն փախուստ տւեցին, ահագին փողեր ծախսելով կաշառել են կառավարչական յայտնի և անյայտ չինովնիկներին յայտնի բիւրոյի ամենանւաստ ընկերներից մէկի միջոցով և դրա համար տեղի ունեցած մեր դիմումին՝ գալ ընկերական-հասարակական դատի, որ փաստօրէն աչքերը կոխենք, խուսափեցին առաջուայ նման:

Զգալով դատի, այժմ կազմում են նորա նոր դաւադրութիւններ իրենց կոյր գործիք դառած զինուորների ձեռքով:

Կանգնեցէք, բաւական է, համբերութեան բաժակը լցուեց. համբերութիւնը զէն շարունակել... տխրահռչակ չէֆեր, լաւ ըմբռնեցէք, որ այլևս ձեզ չեն թոյլ տալ լրում աշակերտել անմեղ զինուորների մէջ և քայքայել դաշնակցութիւնը. այսուհետեւ հետամուտ ենք լինելու ձեզ քայլ առ քայլ:

Ընկեր զինուորներ, զգուշացէք ու հեռացէք այդ դաւադիր ղեկավարներից և, կուրօրէն պատճառ միք դառնալ եղբայրական արիւն թափելուն, ընտրեցէք ձեր գիտակիցներից մի քանի հոգի, թող զինուորի հերոսութեամբ գան ստուգելու դաւաճանութիւնը և վարեն դատը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԲԱՑՄԱՆ ՕՐԸ

Պետական Դումայի անդամ Լ. Վ. Կարդաշեվը «Петер. Газета» լրագրում պատմում է հետեւեալը. «Դժուար կարող են հաւատալ նրանք, որոնք չեն եղել ամբոխի մէջ, որ Պետական Դումայի հէնց առաջին նիստից անմիջապէս յետոյ սկսվեն բռնութիւններ հաւաքված ժողովրդի դէմ, առանց որեւէ առիթ տալու վերջիններիս կողմից: Պատգամաւորներից շատերը աշխատում էին հանգստացնել ամբոխին, և պէտք է խոստովանել նա մեզ լսում էր: Դումայից դուրս գալուց յետոյ, ամբոխը մեզ մի քանի պատգամաւորներիս շրջապատեց օղակաձև և մեզ հետ միասին առաջ շարժվեց Պատեոմկինսկայա փողոցով: Հազիւ գնացել էինք մի քանի քայլ, երբ հեռւում կանգնած ժանդարմները պատրաստվեցին [illegible] տեցել էին: Ես կանգ առայ և բղաւեցի նրանց վրա որ չը համարձակվեն արշաւել ժողովրդի վրա, տրորել նրան: Չը գիտեմ ինչու, բայց նրանք կանգնեցին ինձանից մի քանի քայլ հեռու և յետ դարձան: Վտանգը անցաւ: Նախ պատգամաւոր Կուզնեցովը, ապա ես դիմեցի ժողովրդին և հանգստացնելով ժողովրդին, համոզեցինք, որ այժմ անօգուտ է կոնֆլիկտ ստեղծել, որ մենք պէտք է դեռևս սկսենք աշխատել, ինքներս պէտք է ընտելանանք այդ գործին և հարկաւոր է հնարաւորութիւն տալ ժողովրդական գիւղական դասերին կազմակերպվելու: Ամբոխը համոզվում է և խաղաղ թափօրը «մարսէլեզա» երգելով, գնում է դէպի Ֆուրշտադսկայա փողոցը: Քիչ էր մնացել Լիտէյնայա պրոսպեկտին հասնէինք, յանկարծ առաջից 40 ժանդարմներ սրարշաւ ժողովրդի վրա յարձակվեցին: Սարսափը աննկարագրելի էր: Ամենքը սկսում են այս ու այն կողմ փախչել: Միակ փրկութիւնը մայթերն են և ժողովրդի մեծ մասը վազում են այդտեղ: Ինձ էլ քաշ տուին այնտեղ: Ժանդարմները սլանում անցնում են, իսկ փողոցում մնում են ընկած, ձիաների ոտների տակ տրորված մի քանի մարդիկ, որոնց թւում և մի կին՝ բաղուկները պարզած: Այսօր ես կաշխատեմ այդ մասին զեկուցում տալ աշխատաւոր խմբակի ժողովում, որին ես պատկանում եմ, և հաւանականօրէն ինձ կը յանձնարարվի մօտ օրերս տեղեկացնել ի գիտութիւն Դումայի դրա առիթով»:

—Պատգամաւոր Գուբարեւը «Рус. Жизнь» լրագրի մէջ հաղորդում է. Պոտեոմկինսկայա փողոցում ես տեսայ ժանդարմների ձիաւոր մի խումբ, որ սրարշաւ սլանում էր դէպի ամբոխը. ես մօտեցայ և վճռաբար ասացի, որ ես Պետական Դումայի անդամ եմ և պահանջում եմ վերջ տալ այն բռնութիւններին, որ անում են ժողովրդի միջից դուրս եկած զինուորները: Ժանդարմներից մէկը կոպտաբար պատասխանեց. «քո գործը չէ». բայց այդ միջոցին մի փոքր իրարանցում տեղի ունեցաւ, զրգռված ամբոխը սկսեց վրա տալ, իսկ ժանդարմները նախ նահանջեցին և ապա յանկարծակի յետ դարձան ու հեռացան:

—Պատգամաւոր Բէլանովսկին «Рус. Жизнь» լրագրում պատմում է, թէ ինչպէս Դումայից դուրս գալուն պէս ճանաչում են իրան և շրջապատելով նրան՝ տանում են ձեռքերի վրա բարձրացրած Լիտէյնայա փողոցում, երբ նա մի ճառով դիմում է ժողովրդին պաշտպանել Դուման ժանդարմները սրարշաւ յարձակվում են ամբոխի վրա և սկսում են աջ ու ձախ մտրակահարել: Ես մի ճառով, ուզեցի ազդել նրանց վրա, որպէս զի բռնութիւն չը գործեն: Բայց ինձ չուզեցին լսել: Շատերը տրորվեցին ձիաների սմբակների տակ և շատերը մտրակահարվեցին:

Ֆ. Ա. ԳՕԼՕՎԻՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՑԱՐՍԿՈՅԵ ՍԵԼՕՅՈՒՄ

Ֆ. Ա. Գօլօվինի ընդունելութեան ժամանակ Ցարսկոյէ Սելօյում, մինիստրներից ոչ ոք ներկայ չէր եղել, բացի պալատի մինիստրից: Ընդունելութիւնը, համեմատած առաջին նախագահի ընդունելութեան հետ, աւելի հանդիսաւոր է եղել և երկարատև: Դումայի նախագահին, ընդունելութիւնը վերջանալուց յետոյ, ներկայացան բարձրաստիճան անձերից շատերը: Նրանց հետ ունեցած խօսակցութեան ժամանակ Գօլօվինը յայտնել է, որ Դուման ջերմ կերպով ցանկանում է աշխատել և որ, եթէ այս աշխատութեան համար չեն ստեղծվի արհեստական խոչընդոտներ և արգելքներ, այն ժամանակ կարելի է հաւատացած լինել, որ ինքը Դուման չի ստեղծի կոնֆլիկտ: Դումայի նախագահի կարծիքով, պատգամաւորների ահագին մեծամասնութիւնը նպատակ ունի միայն երկրի բարօրութիւնը և տանջված ժողովրդի երջանկութիւնը: («Новь»)

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ԿԼԵՄԱՆՍՕ

Բուրժուա խօսքը՝ շնորհիւ տհաս մտածողների և թերուսների խուլիգան խօսքի նշանակութիւն է ստացել: Թէ ինչ է բուրժուան, որն է նրա դերը կեանքի մէջ, այդ շատ գեղեցիկ կերպով լուսաբանել է Ֆրանսիայի առաջին մինիստր յայտնի Կլեմանսօն իր [illegible] արտասանած մի ճառում, որի մի քանի կէտերը աւելորդ չի լինի բերել այստեղ:

Ֆրանսիայում անդառնալի կերպով անհետացել է միապետութիւնը. ազնուականութիւնը և կղերականութիւնը կորցրել են իրանց նախկին նշանակութիւնը. շնորհիւ մեծ յեղափոխութեան՝ ասպարէզ եկաւ բուրժուազիան, որը խաղացել է մեծ դեր քաղաքական կեանքի մէջ: Մենք բոլորս բուրժուա ենք. ոմանք ի ծննդէ ստանալով նիւթական մեծ ժառանգութիւն, միւսները շնորհիւ իրանց անհատական ջանքերի և ընդունակութեան: Բայց այժմ հանդէս է գալիս մի նոր իշխանութիւն՝ դեմօկրատիան, որի մէջ պիտի մտնէ և աշխատող բուրժուազիան (la bourbeoisie laboriesse): Բուրժուազիան ներկայումս ունի մեծ դեր կատարելու, ինչպէս նա կատարել է 1848 թւականին, բայց նրա մի մասը սօցիալիզմի երկիւղից անցել էր կայսրութեան և դիկտատուրայի կողմը: Այդ սխալը նա քաւեց տեսնելով թէ ներքին սօցիալական կռիւներ և թէ արտաքին արշաւանք (խօսքը անշուշտ կօմմունայի և ֆրանս-պրուսական պատերազմի մասին է:)

Այդ ժամանակից յետոյ բուրժուազիան համոզվեց, որ նա՝ իբրև մի ղեկավար դասակարգ ամենաազնիւ և անշահասէր մտքով շատ բան ունի անելու:

Մենք տեսնում ենք, որ բանւորական դասակարգը անկիրթ է, առանց դիսցիպլինայի և չը կազմակերպված: Այդ դասակարգի գոյութիւնը մի մեղադրանք է նրանց դէմ, որոնք չեն մտածել լուսաւորել և կրթել այդ վերջիններին: Մենք պիտի ուղղենք այդ սխալը: Ահա մեր ծրագիրը: Մենք պիտի ազատենք Ֆրանսիան ամեն տեսակ բռնակալութիւնից՝ թէ դասակարգային և թէ այլ տեսակ: Մենք ցանկանում ենք իրաւունք, ազատութիւն և արդարութիւն նոյն իսկ մեր հակառակորդների համար: Մենք ցանկանում ենք վերանորոգութիւն ոչ թէ միայն արտաքին, այլ և ներքին խաղաղութեան մէջ, որովհետև նա կարող է տեղի ունենալ միայն քաղաքացիական խաղաղութեան մէջ (Lapaix civi):

Մեր քաղաքականութիւնը պարզ է. պիտի աշխատենք, որ դեմօկրատիայի հանդէս գալը լոկ խօսքերով չը լինի: Բանւորական դասակարգը ունի իրաւունքներ, որոնք անուշադիր են մնացել. մեր պարտքն է նրան իր իրաւունքի տէր անել, որը մենք կանենք առաջադիմաբար, մեծ եռանդով և այնպիսի մեթօդով, որը անաջողութեան չը հանդիպի:

Մենք [illegible] ենք վերջապէս. մենք նրանց սերունդն ենք, որոնք կատարել են յեղափոխութիւն, որոնք թափել են իրանց արիւնը և որոնց յիշատակը աշխատում են նսեմացնել: «Le Temps» լրագիրը գեղեցկելով վերոյիշեալ ճառը իր էջերում, նուիրում է մի առաջնորդող «La bourgeoisie» վերնագրով, որի կարճառօտ միտքն հետևեալն է:

Դեմօկրատիան ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձուլումը բոլոր դասակարգերի, միութիւն բոլոր քաղաքացիների անխտիր, թէ ո՞ր դասակարգին են նրանք պատկանում, որը չէ կամենում տանել ոչ մի բռնակալութիւն ոչ մի դասակարգից:

Անհարակոյս՝ կասեն, որ կան բուրժուաներ և կան բանւորներ: Բայց առաջինները ստանալով հարստութիւն կամ ծնողներից կամ իրանց աշխատանքով, չունեն առանձին քաղաքական մենաշնորհ ազգի մէջ. ամենքը հաւասար են օրէնքի առաջ: Եւ վերջապէս դժուար է որոշել, թէ ո՞րն է բուրժուան. ո՞ր է սկսվում և վերջանում նա: Բուրժուան յաճախ ոչ այլ ինչ է, եթէ ոչ յանկարծ հարստացած պրօլետար (prolétaire parvenu): Չը կայ անթափանցելի միջնորմ բուրժուայի և պրօլետարի մէջ. շատ դիւրին է մէկից միւսին անցնելը:

Այո, բուրժուան մի առանձին դասակարգ չէ, նա սօցիալական ընտրութեան արգասիք է (produit dela sélection sociale)

Բուրժուան պէտք է լինի կրթիչ բանւորական դասակարգի, բարեփոխիչ նրա դրութեան և օժանդակիչ, որ նա կարողանայ բարձրանալ՝ թէ մտաւորապէս և թէ նիւթապէս: Հարկաւոր է գրգռել (susciter) և խրախուսել մարդկանց անհատական արժէքը և եռանդը, ոչ թէ քնացնել նրանց համայնականութեան ֆրազներով, որը կարող է տանել նրանց դէպի շուտափոյթ կործանում:

թժ. Բ. Ա.

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Մոսկվայից, փետրվարի 21-ին)

IV

Հնչեց ժամը... Հասաւ այն մեծ և նշանաւոր մօմենտը, ուր թեակոխում է ռուսական ազատագրութեան պատմութիւնը: Կատարվեց պատմական այն մեծ ակտը, որին եօթ ամսից ի վեր սպասում էին Ռուսաստանի լայնածաւալ պետութեան բազմաչարչար ազգութիւնները:

Ամսիս 20-ին բացվեց երկրորդ Պետական Դուման, ռուսական պարլամենտը:

Անցեալ տարի, Պետական Դումայի բացման օրը, մայրաքաղաքի բոլոր կրթական, հասարակական և պետական հիմնարկութիւններում պարապմունքներ չը կային, մասնաւոր վաճաականական շատ ձեռնարկութիւններ փակ էին, մայրաքաղաքը ամբողջովին զարդարված էր դրօշակներով, զբօսավայրերում նուագում էին զինուորական երաժշտական օրկէստրները և առհասարակ ամեն ինչ աչքի էր ընկնում իր արտասովոր երևոյթով, իր ուրոյն առանձնայատկութիւններով: Ժողովրդի ուրախութեանը չափ ու սահման չը կար. ամենքի դէմքի վրա ժպիտ և խնդութիւն էր տիրում:

Այդպէս չէր երէկ, երկրորդ Պետական Դումայի բացման օրը, մայրաքաղաքում: Այդ օրը բացի կրթական հիմնարկութիւններից, ուր պարապմունքներ բոլորովին չը կային և քաղաքային վարչութիւնից ու նահանգական զեմստվօյից, ուր պարապմունքները 2 ժամ սովորականից վաղ վերջացան, պէտք է ասել, որ մայրաքաղաքը ոչ մի բանով աչքի չէր ընկնում. կարծես թէ այդ օրը չէր կատարվում պատմական այն խոշոր դէպքը, որ պիտի Պետական Դումայի բացումն էր: Միայն չը մոռանանք յիշատել, իրիկնադէմին մայրաքաղաքը հետաքրքրվում էր Դումայի բացումով. արդէն տասնեակ հազարաւոր հեռագիրներ տպագրված ցրվում էին հասարակութեան մէջ. քաղաքացիները անխնայ գնում էին այդ հեռագիրները և մեծ հետաքրքրութեամբ կարդում:

Ընթերցողի ուրախութեանը սահման չը կար, երբ հեռագիրները հաղորդեցին, որ Պետական Դումայի նախագահ է ընտրել Ֆ. Ա. Գօլովինը, ինչպէս որ սպասելի էր. բայց նրա ճառը, որ բաւական չոր և ջրալի էր, կենդանի հետաքրքրութիւն չը զարթեցրեց հասարակութեան և մամուլի մէջ: Ընթերցողը համոզված էր, որ պ. Գօլովինի ճառը շատ հետաքրքիր էր լինելու ներքին իմաստի և բովանդակութեան կողմից:

Երեկոյեան հեռագրերի տուած համառօտ տեղեկութիւնները Պետական Դումայի բացման առիթով, պարզ է, որ բաւարարութիւն տալ ընթերցողին չէին կարող: Այսօր մայրաքաղաքի թերթերը բաւականին հարուստ և բովանդակալից էին և գրեթէ ամբողջովին նուիրված էին Դումայի բացման: Տեղական թերթերից աչքի էին ընկնում «Парусъ» «Русскія Вѣдомости» և «Русское Слово», որոնք մեծ քանակութեամբ ցրվում էին հասարակութեան մէջ, տալով մանրամասն տեղեկութիւններ Դումայի բացման, նախագահի ընտրութեան, ընդհանուր տրամադրութեան, բիւրօկրատիայի և առհասարակ Դումայի բացման հետ կապված երևոյթների և հանգամանքների մասին:

Այսպէս թէ այնպէս, Մօսկվան գոհ է պ. Գօլովինի նախագահական պաշտօնի ընտրութեամբ և զգալով այն ծանր և խոշոր պարտականութիւնը, որ ծանրանում է պ. Գօլովինի վրա, այն զօրեղ և պատասխանատու դերը, որ նա խաղալու է Պետական Դումայի ամբողջ գործունէութեան ընթացքում, համոզված է, որ նա կարդարացնէ ամբողջ Ռուսաստանի ժողովրդի և պատգամաւորների այն յոյսերը, որ նրանք ունէին դէպի պ. Գօլովին, այն յարգանքն ու պատկառանքը, որ տածում էին դէպի նա:

Սրտանց ողջունելով պ. Գօլովինի ընտրութիւնը, ցանկանում ենք եռանդ, կամք և ոյժ գործելու այն փշոտ ասպարէզում, որին վիճակված է նա, որտեղ նա արդիւնաւոր գործունէութիւն է ունենալու....

Առաջին Պետական Դումային նախագահ տուեց Ռուսաստանի սիրտը,—Մօսկվան, իսկ երկրորդ Դումային, դարձեալ Մօսկվան: Որպիսի գեղեցիկ զուգադիպութիւն...

V

Անցեալ անգամ հաղորդել էի, որ Պետական Դումայի բացման առիթով միտինգ պէտք է լինի համալսարանում: Այդ միտինգը կայացաւ երէկ երեկոյեան:

Իրաւաբանական կորպուսի առաջին և երկրորդ լսարաններում, միջանցքներում և սանդուղքների վրա վխտում էր հոծ բազմութիւն ուսանող-ուսանողուհիների: Ամենքը ուրախ, լցված վարդագոյն յոյսերով և համոզված, որ Դուման փառաւոր ապագայ է խոստանում Ռուսաստանին. ուրախալի ընդհանուր տրամադրութիւնը յիշեցնում էր հոկտեմբերեան ազատութեան օրերը, ժողովրդի ասպարէզ նետվելու ժամանակը:

Միտինգում գլխաւորապէս խօսեցին դարձեալ սոց.-դեմ. և սոց. յեղափոխականները, որոնք շեշտեցին այն զօրեղ փաստը, որ Դումայի մեծամասնութիւնը կազմված է գլխաւորապէս օպպօզիցիօն տարրերից, որ ժողովուրդը Դումա է ուղարկել այնպիսի հաստատակամ և տոկուն անձանց, որոնք իսկական ժողովրդական ազատութեան համար պատրաստ են զոհել իրանց կեանքը: Ժողովուրդը պէտք է պահպանէ Դուման, պաշտպանէ նրան: Թէ մեծամասնականները և թէ փոքրամասնականները միաբերան ընդունում էին Դուման պահպանելու անհրաժեշտութիւնը, որպէս ժողովրդական տրիբունա, որպէս մի ոյժ, որ կապում է իրար հետ հասարակութեան ամենալայն խաւերը:

Բացի այդ, մի քանի հռետորներ ցոյց տուին այն լուրջ խնդիրները, որ Դումայի առաջ են դրված. հարկաւոր է, որ ձախակողմեան տարրերը միանան Դումայում, որ օպպօզիցիօն տարրերը չէին ցանկանայ, որ Դուման երբևիցէ ցրվի. այդ հանգամանքի հետ միասին հռետորները շեշտեցին, որ նրանք իրանց բաւական կորրէկտ պահեցին երէկ Դումայում, որ նրանք խուսափեցին այն դեմօնստրացիաներից, որին առիթ էին տալիս խուլիգանական տարրերը Դումայում: Եթէ ձախակողմեան տարրերը կարողացան իրանց զսպել և անախորժութիւնների տեղիք չը տալ, այդ արդէն ցոյց է տալիս թէ նրանք որ աստիճան քաղաքականապէս հասունացած են, թէ նրանք որպիսի քաղաքական տակտ բանեցրին երէկւայ դէպքում, նրանց քաջ յայտնի է, թէ ինչու են ուղարկված Դումա և այլն:

Բոլորովին հակառակ կերպով խօսեցին հռետոր-անարխիստները, որոնց կարծիքով Դուման միայն խանգարում է յեղափոխութեան և խաբում է ժողովրդին, որ իբր թէ պարլամենտական ճանապարհով կարող է բաւարարութիւն տալ ժողովրդի կարիքներին: Նրանց քննադատեցին հռետոր-սոց.-դեմօկրատները, իսկ վերջում միտինգը խորհրդակցական բնաւորութիւն ստացաւ:

Կադետներից ոչ ոք չը խօսեց միտինգում և ոչ ոք էլ չը պաշտպանեց նրանց տակտիկան:

Ընդմիջումի ժամանակ ազատութեան համար ընկած հերոսների յիշատակին երգվեց Թաղման քայլերգը:

Երկար և տաք ճառերից յետոյ, որ տևեցին մինչև երեկոյեան ժամի 11-ը, ընդունվեց հետևեալ բանաձևը. «Մենք, Մօսկվայի համալսարանի ուսանողներս, փետր. 20-ի միտինգում ընդունեցինք հետևեալ րէզօլիւցիան.—գիտակցելով Պետական Դումայի պատգամաւորների այն ծանր և փառաւոր միսիան, որ կայանում է յեղափոխական ոյժերը միացնելու և Սահմանադիր Ժողովի համար վճռական կռիւ մղելու կամայականութեան և հարստահարութեան դէմ, մենք ողջունում ենք Դումայի յեղափոխական մեծամասնութեան և յայտարարում, որ բարոյական պարտքի զգացումով մեր բոլոր ոյժերը կը տանք պրօլետարիատի և աշխատաւոր գիւղացիութեան ծառայութեան գործին՝ ազատութեան, հողի և կամքի համար»:

Այս րէզօլիւցիան ընդունվեց բուռն ծափահարութիւններով, որից յետոյ բազմամարդ միտինգը խաղաղ կերպով ցրվեց...

Ոսկու-Զօն

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

II

Հիւանդանոցը պիտի դրված լինի գիտական, առողջապահական հիմքերի վրա. տեսնենք թէ ինչ առողջապահական հիմքերի վրա է դրված ճեմարանի հիւանդանոցը, և ինչ չափով նա բաւարարութիւն է տալիս առողջութիւնը քայքայված մարդու պահանջին:

1. Սենեակների մաքրութիւնն ու օդը.—Սենեակները շինած են բաւականին նպատակայարմար: Մաքրութիւնը ոչնչով չէ տարբերվում ճեմարանի սենեակների (դասարանների) մաքրութիւնից: Արտաքնոցը հիւանդանոցի շինութեան մէջն է և այնպէս անյարմար է շինված, որ գարշահոտութիւնը լցվում է հիւանդների սենեակները. այս մասին բազմաթիւ անգամներ ասված է տեսչին, բայց մինչև այժմ դեռ չէ փոխված:

2. Ամենաանհրաժեշտ իրերի բացակայութիւնը ճեմարանի հիւանդանոցում.—Հիւանդանոցում առանձնապէս պատրաստի, փոխնորդ սպիտակեղէններ չը կան, (սաւան, բարձի երես, շապիկ, վարտիք) թէև այդ բանի մասին մի քանի անգամ բժիշկն է գրել: Եթէ պատահում է, որ հիւանդը գիշերը քրտնում է, նա իր շորերը փոխելու ոչ մի յարմարութիւն չունի. և քրտնած շորերը, կամ մնում հիւանդի վրա չորանում են, և կամ հիւանդը այդ շորերը հանում գցում է իր մահճակալի վրա, (չորացնելու համար, որ յետոյ հագնի) իսկ ինքը մերկ մարմնով պառկում աւելի քիչ քրտնոտած վերմակի տակ: Իսկ եթէ պատահում է, որ նախ քան շապիկէ չորանալը նոյն հիւանդը մի անգամ էլ է քրտնում, այն ժամանակ միայն պիտի երեւակայել. չորացած շոր չը կայ, քրտնած սաւանն ու վերմակը, նորերով փոխարինելու յարմարութիւն չը կայ. հիւանդի վիճակը հասկանալի է կարծեմ: Քրտինքի այս բուրմունքն էլ պիտի աւելացնել արդէն գոյութիւն ունեցող գարշահոտութեան վրա և այստեղ, այսպիսի տեղում, հիւանդը պիտի առողջանայ: Խալաթներ չը կան, թէև բժիշկը մի քանի անգամ պահանջել է: Հիւանդանոցում առանձին մահճակալներ չը կան. իւրաքանչիւր հիւանդ իր մահճակալը իր հետն է բերում: Եթէ պատահում է, որ մէկը վարակիչ հիւանդութեամբ պառկում է, առողջանալուց յետոյ, նա էլի պառկում է իր չախտահանված մահճակալում, որից կարող է էլի կրկնվել հիւանդութիւնը: Չը կան և անհրաժեշտ գործիքներ (գործիքներ պէտք եղած դէպքում բերում են վանքի դեղատնից,) այնպէս որ եթէ մէկը գիշեր ժամանակ մի որևէ հիւանդութեամբ տանջվում է, նրան շատ անգամ հանգստացնել կարելի չէ լինում, յարմարութիւն չը կայ հիւանդանոցում ջուր տաքացնելու (վաննաների, վէրքեր լուանալու) համար:

Մինչև վերջին ժամանակներս, հիւանդներին աղը տալիս էին թղթի կտորների վրա. և երբ ես մի անգամ վարիչներից մէկից, պահանջեցի, որ աղաման տան, հետևեալ պատասխանը ստացայ. «մուկը ծակիցը չի մըտնում, ցախաւելը պոչից եք կապում»: Էլ ինչ կարելի է պատասխանել այս տեսակ մտածողներին:

3. Խնամք.—Հիւանդանոցում կայ միայն մի ծառայ, որը ոչ մի հասկացողութիւն չունի առողջապահութիւնից. ամեն բան անում է վայր ի վերոյ, մանաւանդ որ վրան հսկող չը կայ, գիշերն էլ այնտեղ չի մնում, այլ գնում է իրանց տունը: Ուրեմն, գիշերը հիւանդանոցում մարդ չի մնում. այս մասին թէ բժիշկը և թէ ես միքանի անգամ ասել ենք տեսչին, բայց անհետևանք: Կայ մի ֆելդշեր, որ գալիս է օրը երկու անգամ, կէս-կէս ժամ և գնում է իր հետը տանելով դեղատան դռների բանալիները: Այսպէս ուրեմն, մնացած ժամանակներում, հիւանդների մօտ մի հասկացող մարդ չի լինում. պատահում է, որ այդ ժամանակամիջոցում, կամ գիշերը, մէկը յանկարծակի հիւանդանում է. ոչ մի կերպ, չի կարելի օգնել: Մի ծառայ չի կարողանում բաւականութիւն տալ բոլոր պահանջներին: Հիւանդների մօտ ընդհանրապէս մարդ չի լինում, և դուրս գնալիս,—առանց ուրիշի օգնութեան,—հիւանդը պատահում է, որ վայր է ընկնում, լաց լինում, մինչև մէկը գալիս օգնում է: Հիւանդի աղտեղութիւնը շատ անգամ ժամերով մնում է իր սենեակում: Եթէ սրա հետն էլ աւելացնենք փչացած օդի վրա, արդէն հասկանալի կը լինի ամեն բան: Եւ ես կարծում եմ, եթէ ճեմարանում մահվան դէպքեր բացառիկ են, այդ հանգամանքը պէտք է վերագրել, ոչ թէ այն բանին, որ «լաւ» են պահում, այլ որ, երիտասարդական ոյժը յաղթում է հիւանդութեանը: Ես բաւական եմ համարել այսքանը—որովհետև եթէ ես շարունակեմ թուել հէնց ամենախոշոր դէպքերը մի առ մի, դա չափազանց երկար կը լինի.—խոշոր գծերով կը նկարագրեմ հիւանդներից մի քանիսների վրա տուած խնամքը, որը իբրև կոնկրետ օրինակ, աւելի լաւ կերպով կարտացոլի այն անփութութիւնը, անտարբերութիւնը, որ ունեն նրանք, դէպի աշակերտի առողջութիւնը:

1. Բիւլբիւլեան Հայկ. (հիւանդացաւ սեպտեմբերի կէսերին). հիւանդութիւնը թոքերի բորբոքում էր: Հիւանդութեան առաջին օրերում, ճեմարանի բժիշկը բացակայ էր: Նկատելով, որ հիւանդի դրութիւնը ծանր է, խնդրեցի բժ. պ. Զաւրեանին (ապրում էր Վաղարշապատում), որ գայ և նայի: Նայեց, նշանակեց անունը և գրեց դեղատոմս, պատուիրելով, որ իսկոյն դեղը բերեն: Ուղարկում եմ տոմսակները տեսուչի մօտ: Ծառան վերադառնում է ինձ մօտ հետևեալ պատասխանով: Պէտք է անունը մեր բժիշկը ստորագրի, առանց նրա ստորագրութեան չեմ կարող պատրաստել տալ, իսկ դեղատոմսը նախ պիտի գանել տեսչին ստորագրել տալ, ապա թէ կը բերվի»: Հիմանալի դատողութիւն չէ. ուրեմն հիւանդը առանց ճեմարանի բժշկի, ուտելու իրաւունք չունի, և առանց տեսչի ստորագրութեան դեղ չը պիտի գործածի: Իսկոյն գնում եմ, և երկար ման գալուց յետոյ, (օրը տօն էր) պատահում եմ տեսչին, ասում եմ եղելութիւնը և աւելացնում, թէ երբ կայ դեղատոմս և բժշկի ստորագրութիւն, այնտեղ ձեր ստորագրութեան կարիք չը կայ, իսկ եթէ ուզում էք ստուգել, կարող էք գալ դեղատնից դեղի հետ ուղարկած դեղատոմսը նայել»: Տեսուչը ինձ պատասխանում է, որ զեղծումներ շատ են եղել առաջանոցում, և մի երկար պատմութիւն, որ ինքն է պատուիրել, որ իրան ցոյց տան տոմսակները և այլն. ասում եմ, որ այդ անյարմար և մինչև անգամ վտանգաւոր է հէնց այն պատճառով, որ շատ անգամ հարկաւոր է դեղը անմիջապէս տալ, իսկ կարող են ձեզ չը գտնել... և մի շարք առարկութիւններ): «Հա, թէ չէ, ինչպէս որ ասել եմ այնպէս կը լինի, այժմ գնայ դեղը բերել տուր»: Հրաշալի դատողութիւն... Դուրս եմ գալիս, գնում եմ ճեմարան, պատահում է վերակացուներից մէկը, տալիս է ինձ մի բուլի, ասելով որ բժ. Զաւրեանը ասել է և խնդրել որ դեղ առնեմ: Շշմում եմ. չեմ իմանում թէ ինչ դեղ, և ում համար. մտքիս չանցաւ էլ, որ կարող է ճեմարանի հիւանդի համար լինել: Վազում եմ բժշկի մօտ, բժիշկը յանդիմանում է ինձ, ասելով, որ այդպէս անփոյթ չի կարելի վերաբերվել, որ ինչ որ բժիշկը պատուիրում է, պիտի կատարել և այլն:—Ինչ պատասխան տայի. լաւ համարեցի լռել. դեղը բերվեց, անհագին աղմուկից յետոյ. մի կերպ մի քիչ էլ անունդ բերեցինք: Եւ, այսպիսի ողբերգութիւն, շարունակվեց մի քանի օր, մինչև որ մեր բժիշկը եկաւ. ի հարկէ լաւանալուց յետոյ նա (հիւանդը) էլի քնեց իր մահճակալում, առանց սաւան և միւս սպիտակեղէնները փոխելու:

2. Մի տարերկրացի աղայ, որ բժիշկ Զաւրեանի միջնորդութեամբ բերել էին հիւանդանոց: Հիւանդութիւնը սկզբնական շրջանում յայտնի չէր, գիշերները շարունակ քրտնում էր. նրան բաւարար չափով փոխնորդ շորեր չէին տալիս և նա ստիպված էր, գիշերվայ ընթացքում իր շորերը ձեռքով գցել մահճակալի վրա, չորացնել և հագնել. իսկ անկողինը շաբաթը կամ երկու շաբաթը մի անգամ էին փոխում: Բժիշկը սրա համար հէնց տեսչին ասել էր, որ կարող է ապրել մինչև գարունը: Մի օր, չը գիտեմ ինչու, տանում հաղորդում են դրան (գնում հարցնում են, թէ ուզում ես հաղորդվել, դէ նա էլ ով գիտէ ինչ է մտածում և ասում է այո. այս հանգամանքն էր որ թոյլ էր տուել Donner-ին երևակայական անմտութիւններ հրապարակ հանել): Հաղորդվելուց մի քանի րօպէ յետոյ սիրտը խառն է տալիս և լաց լինում. ես յետոյ տեղեկացայ որ վախեցել էր. հանգստացրի հիւանդին մի կերպ: Նոյն գիշերը վերակացուների սեղանատնից մի ծառայ գալիս է մօտս և ասում հետևեալը. «տեսուչը ասում է թող նայի թէ հիւանդը ինչ է»: Պէտք է ասեմ, որ ես այդ իմանալուց յետոյ շատ բարկացայ, և ասացի. «գնա և ասա, որ շնորհիւ ձեր կատարած լաւ միջոցին, շատ վատ է». միջանկեալ ասեմ, որ տեսուչը, ոչ մի անգամ հիւանդանոց չի մտել, և դրանից առաջ, հիւանդի վիճակով իսկի չէր էլ հետաքրքրվել: Առաւօտեան երբ բժիշկը իմացաւ, բարկացաւ, և այդ վարմունքը անուանեց «ճիզուիտական»: Իսկ ես հէնց այս դէպքի համար, տեսչին [illegible] ասել եմ, որ այդ մարդասպանութիւն է և ոչ թէ սեղանատանը, ինչպէս առանց ամաչելու գրում է Donner-ը: (Ես Donner-ի նամակին պատասխանել եմ շատ վաղուց, բայց «Մշակ»-ը դեռ չի տպել, պատճառները անյայտ են): Դրանից յետոյ, հիւանդը աւելի և աւելի սկսում է ծանրանալ, առանում է застой крови, և երեսը, ոտները և մասամբ էլ փորը ուռչում է: Այլևս իր ոտքերով դուրս գնալ չի կարողանում: Նրա կեղտոտութիւնը ժամերով մնում է իր սենեակում. օդը ապականում, գիշերը մօտը մարդ չի լինում: Նա տեսնելով, որ իրան խնամք չեն տանում, ինքը ուզում է գնալ արտաքնոց. ուժերը չեն ներում, ընկնում և երկար ժամանակ լաց է լինում, մինչև մէկը պատահմամբ գալիս վերցնում, տանում է: Ահա այս էր այն «խնամքը», որի մասին այդքան որոտընդոստ կերպով, խօսում է Donner-ը: Այս էլ սրա մասին ընդհանուր գծերով. մանրամասնութիւններ չեմ ուզում նշանակել, որովհետև առանց այն էլ բաւականին երկար եղաւ:

3 Սարգսեան Ստեփան. (նոյեմբեր) Թոքերի բորբոքում, տաքութիւնը 40°-ից անց. միշտ զառանցում էր, առաջի երկու գիշերը մօտը մարդ չը կար: Վերջը բաւական «ղալմաղալ» անելուց յետոյ, ուղարկեցին նրա մօտ, իբրև հիւանդապահ, մի կատարեալ տգէտ մոկացու, որի ներկայութիւնը և կոպտութիւնը հիւանդին զայրացնում էր, և հիւանդն ասում էր, որ դրան չի ուզում իր սենեակում: Հիւանդութեան ծանր շրջանում, որոշ բնական անհրաժեշտութիւնից, սաւանը կեղտոտում էր, և շատ դժուարութեամբ յաջողվում էր փոխել սաւանը նոր: Ընդհանուրի համար պատրաստված թէյից խմել չէր կարողանում. դրա համար բժիշկը պատուիրեց, որ նրան վերակացուների հէնտառով պատրաստած թէյից տան. բայց տալիս էին միայն թէյը, իսկ շաքարը ինքն էր առնում. յետոյ դադարեցին թէյը տալուց և ուղարկում էին միայն ջուրը. (կատարեալ սաղաթ). յետոյ այդ էլ դժուարանում էին տալ, մինչև որ բժիշկը մի քանի անգամ պատուիրեց ծառային, որ ուղարկեն ջուրը. բայց վերակացուն դժուարանում էր հաւատ ընծայել ծառայի խօսքերին:

4. Տէր-Մինասեան Սիմէօն—(դեկտեմբերի վերջերը, յունվար). հիւանդութիւնը—порокъ сердца: Սենեակը չափազանց կեղտոտ էր և օդը անտանելի: Պատուիրված էր ամեն օր խորոված տալ. նաւակատիկ են պահել տալիս: Պատուիրված էր գինի չը տալ, տգէտ ծառան բերում է քացախ ու ձուկ է տալիս հիւանդին: Այժմ հիւանդին ուղարկել են հայրենիք. հասկանալի է, թէ ինչու Սեմոնը իր փողով էր գնում:

5. Ալոյեան Եղիշէ. (յունվարի վերջերը). հիւանդութիւնը—плевритъ, порокъ сердца: Հիւանդութիւնը տևել է 2 օր: Պատուիրվել էր տանել բաղանիք. առանց կանոնաւոր ծածկելու, ոտները բոբիկ, կառքով տանում են բաղանիք և նոյն ձևով յետ բերում. գիշերը մեռնում է: Գիշերը մօտը մի բոստանչի է եղել, որը նրա սենեակումը չի քնել, իսկ ըստ ոմանց էլ մարդ չի եղել: Ես այս բանը ստուգել չը կարողացայ, որովհետև հէնց մահվան օրը ես ճանապարհ էի ընկնում. ես հարցրի հիւանդանոցի ազգերից, ասացին, որ մօտը մարդ չի եղել, իսկ յետոյ ականջիս հասաւ, որ այդ բոստանչին եղել է: Առաւօտեան տեսնում եմ դիակը կապած, բարձի երեսը գզգզված, փրփուրը բերանից կախ, և մատները ամուր սեղմած կռնատակին, այնպէս որ ձեռքը վերցնելուց յետոյ մատների տեղը պարզ նշմարելի էր, երևում է, որ շատ էր տանջվել: Այսքանն էլ սրա մասին: Մի փոքրիկ միջադէպ էլ: Բժիշկը մի աշակերտի (վերև յիշած Բիւլբիւլեանին) համար պատուիրում է, որ ուրիշ տեղ ուղարկեն կազդուրվելու համար: Երկար ձգձգելուց յետոյ, տեսուչը նրան ուղարկում է Հաւիճ: Գնում է այնտեղ. չորս օր ցամաք հաց է ուտում (հիմանալի կը կազդուրվի), վերջը ստիպված է լինում դրամ փոխ առնել և վերադառնում է: Հասնում է մինչև «Էջմիածին» կայարանը, դրամը վերջանում է. հիւանդը ոտով ճանապարհ է ընկնում դէպի ճեմարան (12 վերստ, յունվար ամիս և առանց վերարկուի), ճանապարհին գայլերից հազիւ է ազատվում:

Կարծում եմ, որ ասածներս բաւականին պարզում են ճեմարանի առողջապահական դրութիւնը, պարզում են թէ ինչքան խնամք են տանում աշակերտների առողջութեան վրա: Հէնց իմ ժամանակ բժիշկը—որի խորհրդով միայն պիտի կարգաւորվի առողջապահական դրութիւնը—ամեն օր ամեն տեսակ բանի համար տոմսակ էր առաջարկում, շատ անգամ նոյն բանի մասին մի քանի անգամ գրելով: Բայց դրանք գրվում էին և մնում «դօշակ»-ների ծալքերում: Ճեմարանի վարիչները հիւանդանոց շատ քիչ են մտնում, և այն էլ մտնում են առանձին իշխանութիւնով. օր. ասում են աշակերտին. «մարդ չունենք քո հիւանդութեանը նայելու, գնա հայրենիք» և այլն: Տեսուչը հիւանդանոց մտնում է ոչ թէ հետաքրքրվելու թէ ինչպէս են խնամվում հիւանդները, այլ, թէ քանի հոգի հիւանդ կայ և դրա համար ինչքան վառարան է հարկաւոր վառել. Նրա կարծիքով պէտք է բարեխառնութեան աստիճանը աշակերտների թւի հետ ուղիղ յարաբերական լինի: Շատին շատ, քչին քիչ: Հիւանդանոցում բարեխառնութեան աստիճանը իմ ժամանակ 10-ից աւելի չէր բարձրանում, թէև բժիշկը ասում էր, որ առնուազն 14 % պիտի լինի:

Այս է ահա ընդհանուր գծերով ճեմարանի առողջապահական դրութիւնը, այս տարի, Մեսրոպ վարդապետի տեսչութեան օրով: Սրանով ի հարկէ, չեմ ուզում ասել, որ վատը չի փոխվել, իսկ անհոգութիւնը, անտարբերութիւնը, հսկողութեան բացակայութիւնը այս տարի չափազանց շատ է:

Կարիք եղած դէպքում ես կը նկարագրեմ և ուրիշ տարիների, ճեմարանի առողջապահական վիճակը, այնպիսի վարչութեան օրով, որի անդամներից է բացառապէս կազմված այս տարվանը և էլի կը հաստատեմ վերևի ասածները:

Վաղարշակ Աղեկեան

Թիֆլիս, 21 փետրվարի

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Այժմեան պարլամենտական պատգամաւորը լիազոր է ներկայանում ուրիշ մտքով. նա լիազոր է հանդիսանում ոչ թէ իր ընտրողական շրջանի կողմից, այլ իր կուսակցութեան կողմից, եթէ ոչ իրաւաբանօրէն, բայց գոնէ ըստ էութեան: Սակայն, ոչ մի կուսակցութիւնից պատգամաւորը այնչափ լիազօրութիւններ չէ ստանում, որչափ սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնից: Եւ մինչ բուրժուազական կուսակցութիւնների մէջ դիսցիպլինան իրապէս գոյութիւն ունի միմիայն փոքրիկ խմբակների համար, որոնց ետևում կան միայն ընտրողների չը կազմակերպված մասսաներ, սօցիալ-դեմօկրատիայի համար դիսցիպլինան մի անհրաժեշտութիւն է յայտնվում ամբողջ կազմակերպութեան համար, որը ընդգրկում է մարտնչող ինտելիգենտ պրօլետարիատի ամբողջ մասսաները և որը հետզհետէ ընդարձակվում ու իր մէջ է առնում ամբողջ բանւորական դասակարգը:

Այսպիսով, սօցիալ-դեմօկրատական պատգամաւորը նորից դառնում է այն, ինչ որ էր գեմսկի ժողովի համար ընտրված պատգամաւորը, այն է՝ ժողովրդի լիազօրը, բայց ոչ թէ մի փոքր համայնքի բնակիչների լիազօրը. Նա դառնում է մի այնպիսի կուսակցութեան լիազօրը, որը տարածված է պետութեան ամբողջ շրջանի վրա և ձգտում է իր մէջ առնել պետութեան մէջ եղած ամբողջ բանւոր ժողովրդին:

Այն տեղերում, ուր պրօլետարիատը մի առանձին գիտակցական կուսակցութիւն է կազմել և ուր նա, իբրև այդպիսին, մասնակցում է պարլամենտի համար և պարլամենտում մղված կռւին, այնտեղ նա դադարում է այն կուսակցութիւններին պատկանել, որոնց կարող են միշտ սպասել, որ իրանց պարլամենտական ներկայացուցիչները կարևոր խնդիրների ժամանակ կարող են դաւաճաններ ու խաբեբաներ դուրս գալ իրանց ընտրողների վերաբերեալ: Ինչպէս մամուլի մէջ, այնպէս էլ պարլամենտում, մարտնչող պրօլետարիատի կազմակերպութիւնն ու դիսցիպլինան կաշառվելու առաջ ամրապինդ արգելներ են դնում: Ոչ մի կուսակցութիւն չը կայ, որը այն աստիճան իր ձեռքերի մէջ պահէր իր պատգամաւորներին և որը կարողանար այն աստիճան վստահութիւն ունենալ նրանց վրա, ինչպէսին է բանւորական կուսակցութիւնը:

Թող այդ բոլորը հէնց այդպէս էլ լինի, պատասխանում են պարլամենտարիզմի հակառակորդները: Մէկ բանի մէջ, սակայն, բանւոր դասակարգը միշտ ունեւոր դասակարգերից ստոր է կանգնած. ներկայ գոյութիւն ունեցող կարգերի օրով, հէնց այն հանգամանքի պատճառով, որ բանւոր դասակարգը տնտեսականապէս միշտ կախում ունի ունեւորներից, նա երբեք չի կարողանայ բոլորովին ազատ կերպով իր ներկայացուցիչներին ընտրել: Ամեն մի ընտրութեան ժամանակ բանւորներից հազարաւորները ամենաբազմազան միջոցներից ազդված,—կաշառքից, գործից զրկվելու վախից, ճնշումից և այլն,—ստիպված են լինում ոչ միայն իրանց շահերի ամենալաւ ներկայացուցիչներին չը տալ իրանց քուէները, այլ և իրանց հակառակորդներին տալ նրանց: Այդ պատճառով էլ անմտութիւն է նշանաւոր հետևանքներ սպասել այն բանից, որ արտադրութեան արդի կապիտալիստական եղանակի տիրապետութեան օրով պրօլետարիատը մասնակցում է պարլամենտական ընտրութիւններին*):

Մենք, ի հարկէ, չենք հերքի, որ բանւորների կախումն ունենալը շատ է նրանց խանգարում ընտրողական պայքարի ժամանակ և նրանց զրկում է իրանց ամբողջ զօրութիւնը հրապարակ հանելու հնարաւորութիւնից:

Բայց մենք միանգամայն ժխտում ենք այն կարծիքը, թէ այդ հանգամանքը միմիայն ընտրողական պայքարին է յատուկ: Ինչ ճանապարհի վրա էլ որ կանգնի բանւոր դասակարգը իր դրութիւնը բարելաւելու և հասարակութեան մէջ աւելի մեծ ոյժ ձեռք բերելու համար, ամենուրեք էլ կառավարութիւնն ու կապիտալը նրա դէմ դուրս կը գան և ամեն միջոց գործ կը դնեն ու իրանց ամենալաւ ոյժերը հրապարակ կը հանեն, որպէսզի նրա աջողութիւնների առաջը առնեն: Միթէ Րիտտինգաուզէնի կողմնակիցները կարծում են, թէ ընդհանուր ժողովրդի կողմից օրէնքներ քուէարկելը կարող է աւելի քիչ կողմնակի արգելքների հանդիպել, քան պատգամաւորներ ընտրելը: Կամ թէ, մի կողմ թողնելով բանւոր դասակարգերի քաղաքական գործունէութիւնը, այլ միմիայն պրօֆեսիօնալ միութիւնները քննելով, միթէ մենք չենք տեսնում, թէ որպիսի բազմազան միջոցներ են ձեռք առնվում, որպէսզի խանգարեն այդ միութիւնների զարգացումն ու աճումը:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 27-ին

Ժամանակականներից մէկ ու գաղտնի դաւերին ստիպված եմ ասել, որ մէջ կուսակցական դատարանին յանձնվելիք փաստերը շուտով կը խօսեն ամեն բան: Իսկ ինչ վերաբերում է Արմաւիրից և ուրիշ տեղերից ողբով թխված լուրերին, դա դիմակահան եղած Թափառաշրջիկ ընկերների վայոցն է, որոնք շրջաններից փախչում են Թիֆլիս, իրանց կրած անարգանքի մասին գօկլաղ տալու: Մերայինների գործունէութիւնը արմաւիրցիներին շատ պարզ է. Նրանք գործը յանձնում են ժողովրդին և պահանջում են, որ ինքը ժողովուրդը որոշէ չարն ու բարին, գիտենայ իր պարտականութիւնները, որ առեն մի անգամ ընդ միշտ վախճան կը գտնէ անսպառ հայհոյանքների մէջ թաթախված մօնօպօլիստների գործունէութիւնը:

Միհրան

—

Էջմիածին, փետրվարի 24-ին

«Ժամանակ»-ի № 40-ից տեղեկանալով, որ Վ. Ագուլեաց դպրոցի հոգաբարձու Աղ. Տէր-Մկրտչեանցը (իմ մի յօդուածի պատճառով) «Մշակ»-ին նիւթապէս վնասելու համար դադարեցրել է իր բաժանորդագրութիւնը և չը կարողանալով տանել, որ այդ վնասի պատճառ ես եղած լինեմ, տարեկան մի օրինակ «Մշակ» նուիրում եմ Գողթնեաց Ռամիս անունով հայաբնակ գիւղին: Հասցէն—черезъ Верхній Акулисъ, Сел. Рамисъ, въ Армянск. школу. Խնդրեմ համարներն ուղարկել «Մշակ»-ի ներկայ տարվայ № 1-ից:

Խորին յարգանօք՝ Մեսրոպ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետևեալ համարը Վարդանանց տօնի պատճառով լոյս կը տեսնէ շաբաթ մարտի 2-ին:

—

Աղէտեալների օգտին ստացանք. 1) Կրասնովօդսկից—Մկրտիչ Տէր-Խաչատրեանից իր հանգուցեալ ամուսին Նուբարի յիշատակին 25 ր., 2) Նովօրօսիյսկի գիմնազիայի I դաս. աշակերտ Պետրոս Դօլգանօվից, իր երեխայական կապիկկայից 5 ր., 3) Մօսկվայից—3-դ դասարանի աշակերտներ Տէր Մկրտչեանի, Վաչեանցի և Արուենանցի միջոցով ժողոված 10 ր. 60 կ., 4) Զարայկալից—Դաւիթ Ղազարեան Մկրտչեանից 10 ր., 5) Բալախանուց—Երուանդ և Արշակ Պալեաններից իրանց հանգուցեալ հօր Մկրտիչ Պալեանի յիշատակին 50 ր., 6) Բագւից—տ. Գայանէ Կօլմանեանից 94 ր., 7) Բալախանուց—Տիգրան Զախօյեանցի միջոցով ժողոված՝ Մ. Քալանթարեանի Բալախանու նաւթահանքերի ծառայողներից՝ 65 րուբլի, 8) Կուշկայից—մի խնջոյքի ժամանակ Ջհանգիր Առաքելեանի միջոցով ժողոված 31 ր. 25 կոպէկ:

—

Հայոց Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձութեան կողմից յարուցված միջնորդութեան համաձայն՝ Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Միցկեվիչը թոյլատրել է Թիֆլիսի հայ. լուսաւորչական կոնսիստորիայի տրամադրութեան տակ դնել յիշեալ դպրոցի կարիքների համար, դըպրոցապատկան անշարժ կալքերի այն եկամտի մնացորդներից, որոնք կառավարութեան իրաւասութեան տակ եղած ժամանակ ստացվել էին:

—

Թիֆլիսի թեմակալ առաջնորդ Սաթունեան եպիսկոպոսը միջնորդութիւն է յարուցել Փոխարքայի առաջ՝ կառավարչական հիմնարկութիւններում պաշտօն ունեցող հայ ծառայողներին թոյլատրել տօնել հայկական ազգային ու եկեղեցական այն տօները, որոնք չեն մտցված տօների ընդհանուր ցուցակի մէջ:

—

Մինիստրների խորհրդի կառավարչի օգնականը ուղարկել է Կովկասի Փոխարքային ներկայ տարվայ փետրվարի 1-ին Բարձրագոյն հաստատութիւն գտած՝ մինիստրների խորհրդի առանձին օրագրի պատճէնը, որը վերաբերում է Բագւի նաւթային հանքերի բանւորների համար արուարձաններ կառուցելուն: Համաձայն Բարձրագոյն այդ հրամանի՝ առաջարկված է առևտրի և արդիւնաբերութեան մինիստրին համաձայնութիւն կայացնել Կովկասի Փոխարքայի հետ, կազմել յիշեալ արուարձանները կառուցելուն վերաբերող կանոնները, այն պայմանով միայն, որ Բիբի-Էյբաթի նաւթային հանքերին մօտիկ գտնվող ծովային վարչութեանը պատկանող հողաբաժինը՝ 65 դեսեատին տարածութեամբ, նոյնպէս և այդ հողաբաժնի այն մասերը, որոնք խառն են ծովափնեայ հողերի հետ, կարելւոյն չափ ազատ մնան արուարձանների համար շինութիւններ կառուցելուց: Այդ հողաբաժինը մասնացոյց անելու հետ միաժամանակ՝ առևտրի և արդիւնաբերութեան մինիստրի իրաւասութեան տակ է դրվում, բանւորական արուարձանների համար, Բալախանի գիւղում գտնվող պետական ազատ մի հողաբաժին, 70 դեսեատին տարածութեամբ, որը գտնվում է [illegible] լճին մօտ և որ ներկայումս գտնվում է երկրագործութեան գլխաւոր վարչութեան իրաւասութեան ներքոյ: Յիշեալ հողերը՝ նաւթարդիւնաբերողների կողմից բանւորների համար արուարձաններ կառուցելուց յետոյ, մնում են սեփականութիւն պետական գանձարանի, սակայն այդ շինութիւնների համար որևէ պետական հարկ չէ վճարվում: Իսկ թէ այդ հողերը ապագայում չը հարկաւորվեն այլ ևս արուարձանների համար, այդ դէպքում վերադարձվում են նրանք պետական գանձարանին: («Кавк.»)

—

Երեկվանից Ի. Ե. Ֆրանչեսկիի խմբագրութեամբ սկսել է լոյս տեսնել Թիֆլիսում ռուսերէն լեզւով մի օրաթերթ, «Новый Міръ» անունով:

—

Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է իշխանուհի Տ. Ա. Պալավանդօվային հրատարակել Թիֆլիսում իր խմբագրութեամբ վրացերէն լեզւով մի շաբաթաթերթ «Մանավալի» անունով (ապագայ):

—

Քաղաքային սպանդանոցի միկրոսկոպիական կայարանը մտադրութիւն կայ մարտի 2-ից փակելու, խոզեր չը մորթելու պատճառով:

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը թոյլ է տուել Թիֆլիսի գոյքերը կրակի դէմ ապահովագրող փոխադարձ ընկերութեանը մարտի 4-ին հրաւիրել իր անդամների տարեկան ընդհանուր ժողովը:

—

Ոստիկանութիւնը կալանաւորել է Արամ Տէր-Պօղոսեանց ազգանունով մի մարդու, որը երկրորդ քաղաքամասի վաճառականներին սպառնական նամակներ էր տալիս և տեռօրիստների խմբակի անունից փող պահանջում: Կատարված քննութիւնը պարզել է, որ այդ միևնոյն «տեռօրիստը» մասնակցութիւն է ունեցել Գիւղատնտեսական փոխադարձ վարկի ընկերութեան կողոպտմանը անցած տարի, որի ժամանակ սպանվեց բանկի դիրեկտոր Գանչէլին: Տէր-Պօղոսեանցին ուղարկել են Մետեխի բանտը:

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը Փօրու պատերազմա-դաշտային դատարանին է յանձնել յայտնի աւազակապետ Գրիգոր Ցերեթելուն, որը մեղադրվում է մի շարք սպանութիւնների, զինված աւազակութիւնների, ոստիկանութեան և պահակախմբերի պաշտօնեաների վրա յարձակումներ գործելու մէջ:

—

Այսօր, չորեքշաբթի, փետրվարի 28-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի դահլիճում, երեկոյեան ժամը 8-ին կայանալու է Կովկասեան Իրաւաբանական ընկերութեան ժողովը մի քանի հարցերի վերաբերեալ:

—

4-րդ քաղաքամասի ոստիկան Գօլովկինը, որը ապրում է Կուկիայում, փետրվարի 25-ին յայտնել է 9-րդ թաղամասի ոստիկանատանը, որ տունն գնալուց առաջ նրան հանդիպել է մի անյայտ կին և խնդրել է նրան ապաստան տալ իրան գիշերը: Նա տարել է նրան իր տունը, իսկ առաւօտեան նրան գտել է մեռած, որով և խնդրում է դիակը տանել անատոմիական մուզէումը: Դիակը անատոմիական մուզէումում քննելու ժամանակ պարզվել է, որ այդ կինը խեղդամահ է եղել:

—

Փետրվարի 23-ին են արել գործադուլ Կուպերմանի և Էգլսոնի արհեստանոցի (Հաւլաբարում) բանւորները, թւով 26 հոգի, որոնք իրանց տէրերին առաջարկել են հետևեալ պահանջները. աշխատանքները սկսել առաւօտեան ժամը 7-ից և վերջացնել ցերեկվայ 4 և կէսին, կէս ժամ դադարումով՝ թէյի և մէկ ժամ՝ ճաշի համար, վերացնել օրավարձը, փոխարինելով նրան ամսականով. ռոճիկները աւելացնել 30, 20 և 10 %-ով համապատասխան ստացվող ռոճիկներին: Բժշկական օգնութիւնը և դեղօրայքը—տէրերի հաշւով. բանւորների ընդունելութիւնը և արձակումը լինելու է ընկերների համաձայնութեամբ, և այլն:

—

Փետրվարի 24-ին, շաբաթ օրը, կայացաւ Կովկասի Փոխարքայի խորհրդի նիստը, քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ՝ քննելու այն պայմանները, որոնցով թոյլատրվելու է լեռնային ինժեներներ Խատիսեանին և Բրայլովսկուն պայմա-

---

1) «Որչափ երկար ժամանակ է գոյութիւն ունենում պարլամենտարիզմը մի որևէ երկրում,—ասել էր Րիտտինգաուզէնը դեռ 1869 թ.,—այնչափ աւելի է նա դեմօկրատիական շարքերի մէջ մտցնում «առողջ հիասթափութիւն և հաշւով նախատեսութիւն»: Միևնոյն ընտրողական օրէնքի տիրապետութեան օրով, ամեն մի նոր օրէնսդրական ժողով աւելի վատ պիտի լինի իր նախորդից: Իւրաքանչիւր բանւոր գիտէ, որ իր՝ այս կամ այն թեկնածուի համար տուած քուէն, մինչև իսկ այդ թեկնածուի ընտրվելը հազիւ թէ կարող է ազդեցութիւն ունենալ ժողովրդային կուսակցութեան ոյժի վրա ժողովում, բայց բանւորը գիտէ նոյնպէս և այն, որ այն վնասը, որ կարող է իրան հասցնել իր քուէն—կառավարչական, գործատէրերի կամ եկեղեցու ատրիկանութեան շնորհով,—բոլորովին ոչ մի կապ չունի այն օգուտների հետ, որ նա կունենայ, եթէ իր կուսակցութեան համար աջողակ ընտրութիւն կատարվի իր շրջանում»: Ծ. Հ.

նագիր կապել—Սօլօլակի սարի միջով թունել անցնելու համար. խորհուրդը համաձայնութիւն տուեց առանձին մասնաժողովի եզրակացմանը, որի համաձայն պայմանագիր կապողները պարտաւոր են իրանց հաշւով պատ կառուցել Բօտանիքական այգին պաշտպանելու համար, ազատելով նրանց միանուագ 42,000 րուբլի վճարելուց։ Պայմանագիր կապողները պարտաւոր են այդ վարչութեանը վճարել տարեկան 1500-ական րուբլի՝ այդու վրա հսկողութիւնը մեծացնելու ծախսերի համար, որը հանդէս կը գայ թունէլ անցնելու ժամանակ, երբ քաղաքային դուման կորոշէ, որ թունէլի հարաւային մեծ մուտքից մինչև հանքային բաղնիքները ելեքտրաքարշ կառուցվի, առանց որի թունէլը չէ կարող հասարակական բնաւորութիւն ստանալ։

—

Թիֆլիսի նահանգապետը խնդրում է Թիֆլիսի քաղաքագլխին կարճ ժամանակամիջոցում նահանգական ստատիստիքական կօմիտէտին ներկայացնել 1906 թւին քաղաքային ինքնավարութեան ունեցած գործունէութեան համառօտ նկարագիրը, տեղեկութիւններ՝ նոյն տարվայ քաղաքային եկամուտների և ծախքերի մասին, և առ 1-ն յունվարի 1907 թ. քաղաքի ունեցած պահեստի դրամագլուխների հաշիւը։

—

Ձերբակալված թիֆլիսեցիներ Մուրադ Ա. Մարգումեանցը և Կօնստանդին Մ. Մալխասեանը, առանց թոյլատրիչ վկայականների երեք հրացան և երկու ատրճանակ պահելու համար, Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանով բանտարկվում են երեք ամսով, որից յետոյ աքսորվելու են Վիատսկի նահանգը, ոստիկանութեան հսկողութեան տակ։

—

Փետրվարի 25-ին, երեկոյեան ժամը 6-ին, Կաղէտսկի միջանցքում, № 14 տան մէջ ապրող Վասիլի Նիկիտինը յայտնել է ոստիկանութեան, որ նա փինական դանակով վիրաւորել է իր կնոջը, որը Միքայէլեան հիւանդանոց տանելու ժամանակ ճանապարհին վախճանվում է։ Սպանութեան պատճառը հանդիսանում է Նիկիտինի խանդոտութիւնը։ Նիկիտինը բռնված է,

—

Փետրվարի 27-ին, երեկոյեան 7 ժ. 20 րոպէին 5-րդ քաղաքամասի պրիստաւ Սկլեաչենկոյի վրա Լերմօնտովսկի փողոցի և Արաս-Արադսկի հրապարակի անկիւնում մի քանի չարագործներ մօտ 5 անգամ կրակեցին ատրճանակից. գնդակներից երկուսը դիպել են կրծքին, մէկը ձախ կողքին։ Սկլեաչենկօն տեղնուտեղը սպանվել է։ Դիակը ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոցը։

—

Փետրվարի 27-ին, երեկոյեան 8 ժ. 30 րոպէին, Ելիզավէտինսկի փողոցով անցնող կամաւոր զինուոր Վեսելովսկու վրա մի քանի անյայտ չարագործներ 4 անգամ կրակել են, բայց գնդակներից ոչ մէկը չէ դիպել։

—

Փետրվարի 27-ին, երեկոյեան 9 ժ. 15 րոպ. Ֆեօդօրովսկի և Ելիզավետինսկի փողոնների անկիւնում ատրճանակի հարուածներով տեղնուտեղը սպանվել է երեւանցի Անդրէաս Աւագեանցը։ Կրակող չարագործները անյայտացել են։

—

Փետրվարի լոյս 28-ին, գիշերը Թիֆլիսի կայարանի շինութիւնից ոչ հեռու սպանվել է Բեբութով մի անյայտ մարդ։ Մարդասպանները, ցանկանալով թագցնել յանցանքի հետքերը, դիակը դրել են երկաթուղու գծի վրա, ենթադրելով, որ գնացքը, անցնելով դիակի վրայով կը ճզլէ վերջինին։ Դիակը առաջուց նկատվել է։

—

Մօտ օրերումս վախճանվել են Բագուի բանուորական շարժումների երկու հին ախոյանները. մէկը՝ Բագուի բանուորական-ներկայացուցչական խորհրդի նախագահ Լեվ Նիկօլայեվիչ Շենդրիկօվը, իսկ միւսը՝ Վլադիկավկազեան երկաթուղու ծառայողների պրոֆեսսիօնալ միութեան նախկին նախագահ Սօլօմօն Ռեյզմանը։ Շենդրիկօվի անունի հետ կապված է տեղական պրօլետարական շարժումների մի ամբողջ շրջան։ («Н. М.»)

—

Գանձակից գրում են «Тифлисскій Лис.»-ին, որ գեներալ-նահանգապետ Բաուէրի կարգադրութեամբ ազատ են թողել բոլոր 24 առևտրականներին, որոնք բանտարկված էին Լօլաձէի սպանութեան պատճառով։

—

Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառի հայկական Դօրդնի գիւղի բնակիչները, թւով 6 ծուխ, դիմել են Կովկասի Փոխարքային և խնդրել են նպաստ տալ իրանց, սերմացու և աշխատող անասուններ ձեռք բերելու համար, ինչպէս և յետաձգել պետական տուրքերի և հարկերի ժողովելը։ Յիշեալ գիւղը մեծ վնասներ է կրել հայ-թուրքական ընդհարումների ժամանակ։ K.

—

Հերցենշտէյնի սպանութեան գործում մեղադրվող Ռուշկէվիչ-Կրասկօվսկին, որին պահանջում էր ֆինլանդական դատարանը, փախել է արտասահման։ («Рѣчь»)

—

Վլադիվօստօկից «Рѣчь» լրագրին հեռագրում են. «Вост. Русь» լրագրում ապագրված է մի մերկացում, որ բաց է անում բիւրօկրատական նոր «պանամայի» ծայրերը։ Լրագրի ասելով Վլադիվօստօկի զինուորական մարտկոցից գողացվել է ջրասոյզ մակոյկների և ականաւերի մի մասը։ Գողացվել են նոյնպէս նաւերի մեքենաներ։ Այդ բոլորը ուղարկել են Եապօնիա եապօնական շոգենաւերով։ Այս տարվայ փետրվարի 8 ին «Лимынъ» շոգենաւի վրա գրաւել են 60 պուդ պղինձ, մեքենաների մասերից գոյացած։ Ընդամենը տարել են 24 հազար պուդ պղինձ։ Քննութիւն է կատարվում։

—

«Րէյտերի» գործակալութեանը Նէապօլից հաղորդում են, որ պրոֆ. Լօրենցօ Մատէուչչին, որ Վեզուվի երկրաշարժաչափական օբսերվատորիայի տնօրէնն է, նախագուշակում է աշխարհիս վերջը շատ մօտ ժամանակներում։ Յարգելի պրոֆեսսորը աստղաբաշխական հաշիւների հիման վրա պնդում է, որ մարտի վերջերում (Նոր տոմարով) իտալական աստղագէտ Մարկեաուիի գտած գիսաստղի միջուկը կընդհարվի երկրի մթնոլորտին։ Մատէուչչի կարծիքի հետ համամիտ է և նրա եղբայրը, որ նոյնպէս աստղագէտ է։ Երկու աստղագէտներն էլ կարծում են, որ երկրին սարսափելի վտանգ է սպառնում։ Իսկ եթէ երկիրը պատահաբար ընդհարվելու լինի ոչ թէ միջուկի հետ, այլ գիսաստղի պոչին, այն ժամանակ էլ պէտք է սպասել, որ կատաստրոֆա տեղի կունենայ—այն է կը լինի մի մեծ հրդեհ, որը կը լափէ երկրի վրա ամբողջ կենդանական աշխարհը։ («Б.»)

—

Լաւատեղեակ աղբիւրից «Новь» լրագրին հաղորդում են, որ կառավարչական շրջաններում վերջնականապէս վճռած է ամնիստիայի հարցը դրական մտքով և արդարադատութեան մինիստրին առաջարկված է անյապաղ պատրաստել ամնիստիայի նախագիծը հետևեալ հիման վրա. 1) Լիակատար ներումն պէտք է շնորհվի այն բոլոր անձանց, որոնք դուրս են եկել օրէնքի սահմաններից մամուլի միջոցով, բացի այն դէպքերից, երբ յանցանքը ուղղված է եղել միապետի անձի դէմ. 2) Պատժից պէտք է ազատվեն նրանք, որոնք պատասխանատուութեան են ենթարկվել ոչ թէ դատարանով, այլ ադմինիստրատիվ կարգով կամ արտակարգ դրութեան հիման վրա. 3) Ամնիստիա պէտք է ստանան նրանք, որոնք մեղադրվում են յանցաւոր հրատարակութիւններ տարածելու մէջ. 4) ամնիստիա չը պէտք է ստանան նրանք, որոնք տէրրօրներ են կատարել և 5) նրանք, որոնք աջակցել են կամ նախապատրաստել են տէրրօրները, պատիժ կրում են սահմանափակված ժամանակամիջոցով։ Հաւանական է, որ կառավարչական դեկլարացիայում ամնիստիայի մասին կը յիշատակվի։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Պետերբուրգի կօնսերվատորիայի դասատու յայտնի ջութակահար Յովհաննէս Նալբանդեանը մտադիր է մօտ օրերս Թիֆլիս գալու, ուր մեծ պասի առաջին շաբաթը մի քանի կօնցերտներ պիտի տայ։ Պ. Յ. Նալբանդեանը, իբրև հմուտ ջութակահար, որոշ տեղ է բռնում Պետերբուրգի կօնսերվատորիայում. իւրաքանչիւր տարի նա մի քանի կօնցերտներ է տալիս իր աշակերտների հետ միասին և հասարակութիւնը մեծ սիրով ու հետաքրքրութեամբ յաճախում է միշտ. նա գիտէ լեզու տալ իր ջութակին, գիտէ լացացնել, գիտէ զգացումներ շարժել. երկրորդ անգամն է գալիս պ. Յ. Նալբանդեանը Թիֆլիս և կարծում ենք, որ Կովկասի հասարակութիւնը մեծ սիրով կը յաճախէ նրա կօնցերտներին և գոհ կը մնայ նրա զուրթ լարերի քաղցրահնչիւն նուագներից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԱՒՐԻԶԻՑ

Փետրվարի 21-ին

Անցեալ օրը, փետրվարի 19-ի գիշերը, ծանր կերպով վիրաւորել են Թաւրիզի անջումանի անդամ՝ հարուստ վաճառական հաջի Միրզա Հասան Մելանուն։ Տեղիս անջումանի շուրջը տեղի են ունենում ինտրիգաններ. գոյութիւն ունեն դժգոհների մի քանի հոսանքներ. նախ՝ կառավարութիւնը, ապա շահզադաների զօրեղ կուսակցութիւնը, յետոյ՝ բուն պարսիկ աղքատ դասակարգը (ըստ մեր սօցիալիստների՝ պրօլետարիատը)։

Պարզ է, որ կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է ոչնչացնել կամ գէթ չէզոքացնել անջումանը, որ նրա գործունէութեան ամեն կերպ խոչընդոտ է հանդիսանում. շահզադաների կուսակցութիւնը դժգոհ է անջումանից, որովհետև նա նրա մէջ մասնակցութիւն չունի. շահզադաները ներկայացուցիչներ չունեն անջումանի մէջ։

Ինչ վերաբերում է աղքատ դասակարգին, նա իր դժգոհութիւնը պատճառաբանում է նախ՝ այն հանգամանքով և դրութեամբ, որ ներկայացուցիչներ չունի անջումանի մէջ, ապա՝ որ անջումանի անդամները հարուստ կալուածատէրեր, հարուստ վաճառականներ և հոգևորականներ, մօլլաներ են, որոնք այսպէս թէ այնպէս, բնականաբար, իրանց սեպհական շահերը պիտի պաշտպանեն և ոչ թէ աղքատ դասակարգի շահերը։ Վերջապէս ժողովրդի զանազան խաւերի մէջ կայ դժգոհութիւն անջումանի դէմ, որ երբեմն նոյն իսկ բացարձակ կերպով է երևան գալիս։

Անջումանի ազդեցիկ անդամի կեանքի դէմ կատարված մահափորձը շատերը վերագրում են թուրք «յեղափոխականներին»։ Պատմում են, որ անջումանի շինութեան բակը անցեալ օրը մի թուղթ է ձգված եղել, որ հետևեալ բովանդակութիւնն ունի. «Մենք յեղափոխական տէրրօրիստներս Թաւրիզում 70 հոգի ենք և մեզ համար շատ հեշտ է ջնջել ձեզ՝ անջումանի 6 անդամներիդ, որ ժողովրդի իսկական ներկայացուցիչները չէք»։

Իսկ շատերը ասում են, որ Թեհրանի կառավարութիւնը վարձկան տէրրօրիստներ է ուղարկել Թաւրիզի անջումանի անդամներին մէկ-մէկ սպանելու, ժողովրդի վրա սարսափ ձգելու և այսպիսով անջումանը քանդելու և նրա յիշատակն անգամ իսպառ ջնջելու ժողովրդի սրտից և մտքից։

Մի բան ակներև կերպով պարզ է, որ սկսվել է րէակցիա, որ անջումանի դէմ ժողովրդի մէջ դժգոհութիւն գոյութիւն ունի և կառավարութիւնը հալածանք է սկսել անջումանի դէմ։ Կռւող, պայքարող կողմերից որը յաղթող կը հանդիսանայ, ժողովուրդը թէ կառավարութիւնը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Յամենայն դէպս. Պարսկաստանի քաղաքական հորիզոնը մթագնած է, նրա վրա ամպեր են կուտակված։ Գալով մեզ՝ հայերիս՝ պիտի ասել, որ մեզ համար նպաստաւոր և ձեռնտու է, որ պարսիկ կառավարութիւնը զօրեղ լինի և շատ կասկածելի է, որ անջումանը Թաւրիզի հայերին որ և է օգուտ տայ։ Այդ է մեր խորին համոզմունքը։

Դարբին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի։ Այսօր, երեկոյեան նիստում բանուորական հարցով զբաղվող մասնաժողովը քննեց հիւանդութեան դէպքում բանուորներին ապահովագրելու կանոնը. արդիւնաբերողները վճարում են բանուորների անդամավճարների 2/3-ը։ Նախագիծը ընդունվեց համարեա առանց փոփոխութեան։ Արած նկատողութիւնները վերաբերում էին միայն առանձին յօդուածների խմբագրութեան։

ՕԴԵՍՍԱ, 26 փետրվարի։ Բժշկական ֆակուլտէտի քարտուղարի և պրօֆէսօրի դէմ ուսանողների յայտարարած բոյկոտի պատճառով 3 աջակողմեան պրօֆէսօրները հրաժարվեցին դասախօսութիւններ կարդալ։

ՄՈՍԿՎԱ, 27 փետրվարի։ Տպարանատէրերի դաշնակցութեան մէջ մտած բոլոր տպարանները ի կատարումն լօկաուտի միութեան որոշման, արձակեցին բոլոր բանուորներին։ Այն լրագիրներին, որոնք տպվում էին այդ տպարաններում. տրված է երեք օրվայ ժամանակամիջոց՝ ուրիշ տպարաններ փնտռելու համար։

ԲԵՐԼԻՆ, 27 փետրվարի։ Լէհական ֆրակցիաները րէյխստագ մտցրին մի հարցապնդում, որ վերաբերում է դպրոցական գործադուլի համար աշակերտներին արձակելուն։

ԼՈՆԴՈՆ, 27 փետրվարի։ «Թայմսը» խորհուրդ է տալիս Պարսից Շահին ամեն ջանք գործ դնել՝ երկրի խաղաղութիւնը պահպանելու համար, որին կարելի է հասնել շնորհված սահմանադրութիւնը պահելով։ Լրագիրը նախազգուշացնում է, որ Շահը չէ կարող հաշւի առնել արտաքին օգնութիւնը՝ ազատագրական շարժումը ճնշելու համար։ Պարսկաստանով շահագրգռված երկու մեծ պետութիւններն էլ անկեղծօրէն ցանկանում են երկրի բարեկեցութիւնը. յամենայն դէպս կօնֆլիկտներից խուսափելու համար երկու պետութիւնների կառավարութիւնները շահագրգռված են՝ Պարսկաստանում ստեղծելու մի ուժեղ և հաստատ իշխանութիւն, արդար և շիտակ օրէնքների վրա հաստատված կառավարութիւն։

28 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կից, մինիստրի նախագահութեամբ բացվեցին ուսուցչական ինստիտուտների վերատեսուչների և ընտրովի դասատուների համագումարի պարապմունքները։ Համագումարի նպատակն է—պարզել դպրոցական ինստիտուտների և սեմինարիաների կարիքները և կազմի և ծրագրի մէջ մտցնելի ցանկալի վերանորոգումները, շաղկապելով առաջիկայ ընդհանուր ուսում մտցնելու հետ։ Մինիստրութիւնը մտադիր է այդ կրթական հաստատութիւնների բարենորոգումներին ձեռնամուխ լինել մօտիկ ապագայում։

Պետերբուրգի համալսարանի խորհուրդը մշակել է մի դիմում, որը ուղղելու է ուսանողներին և հասարակութեան և խնդրելու՝ չը կազմել ժողովներ համալսարանում կողմնակի անձանց մասնակցութեամբ, որովհետև այդ հանգամանքը կարող է առաջ բերել անցանկալի, համալսարանի համար օրհասական հետևանքներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 փետրվարի։ Դատաստանական պալատի առանձին ատեանը մէկ տարվան բանտարկութեան դատապարտեց «Библiотека для всѣхъ» շաբաթաթերթի խմբագրուհի—ինժինէր-տեխնոլոգ Ռուդէնբէրգի կնոջը, «Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը» գրքոյկը հրատարակելու և Շիշկօյի «Ռուսաստանի պատմութիւնը» գրքից արտատպութիւններ անելու համար։

ՓԱՐԻԶ, 27 փետրվարի։ Գիշերս վախճանվեց հանրապետութեան նախկին նախագահ Կազիմիր Պէրիէն։ Պէրիէնի որդին մերժեց Կլէմանսօյի առաջարկը՝ թաղելու հօրը պետութեան հաշւով, հիմնվելով հանգուցեալի ցանկութեան վրա, որպէս զի թաղումը տեղի ունենայ առանց հանդէսների։

ՍՕՖԻԱ, 27 փետրվարի։ Պետկովի սպանութեան մէջ կասկածվելու համար ձերբակալված է «Բալկանսկի Տրիբունի»-ի հրատարակիչ Իկօնօմօվը, որը վերջին ժամանակները ուժեղ յարձակումներ էր անում կառավարութեան և իշխանի վրա։

ԲԵՐԼԻՆ, 27 փետրվարի։ Րէյխստագը կարձակվի մարտի 9 ից մինչև մարտի 28 ը։

ՍՕՖԻԱ, 27 փետրվարի։ Լուրերին նայած, դատաստանական իշխանութիւնը երևան է հանել, որ մինիստր-նախագահի սպանութիւնը կատարել է դաւադիրների մի խումբ։ Պետրօվին է ընկել Պէտկովին սպանելու վիճակը։ Իշխան Ֆերդինանդը Ստանչէվին ուղարկել է մի հեռագիր հետևեալ բովանդակութեամբ. «Խորապէս վշտացած եմ դազրելի սպանութեամբ։ Մենք կորցրինք Բօլգարիայի լաւագոյն որդիներից մէկին»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մեզասեռ. հ.:
Կ. Մ. ՋԻԿ ՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՀԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Ց. Գուրգինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—6½—7½ ժ.:
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 109—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ն. Հ. Շ.) 31—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ, մարտի 2-ին, նշանակված է ա. պ. անդամների ընդհանուր ժողով, քուէարկելու այն անձերին, որոնք անդամներ են առաջարկված և մի քանի տնտեսական հարցեր վճռելու համար։ (Ե. Հ.) 1—2

ՏԻԿ. Ե. Մ. ՆԱԳԻԲԵԱՆԻ
ՀՈՂԵՐԻՑ, որ գտնվում է Աբասեանի մօտ, յայտարարում ենք ի գիտութիւն տուն շինելու հող առնողների, որ կարող են դիմել Կովկասեան գրամաճառանոցում ժամը 12-ից մինչև 2-ը ամեն օր. գրամաճառանոցը գտնըվում է Ալէքսանդրեան այգու դիմաց, «Լօնդօն» հիւրանոցի տակը։ Գների համար կը յայտարարվի առանձին։
(ա. օ.) 8—20

Երկրագործութեան մինիստրութեան և պետական կալուածների գործակալ
Մ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆԸ
(Թիֆլիս, Սերգիեվսկի փողոց, տ. № 11).



Խաղողի և մրգատու այգիները բուժելու համար առաջարկում է անգլիական լաւագոյն պղնձի արջասպ, աղած ծծումբ, սրսկիչ «Վէրմօրէլներ», փուքսեր և այգու այլ պարագաներ, ջրհան, քամիչներ, սեկատօրներ, դանակներ և այլն։
Ընդունվում են պատուէրներ պտղատու ծառերի սեփական բուծարանից, Սկրա կայարանի մօտ։ (Հ.) 11—12

Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի Վարչութիւնը
յայտարարում է, որ Աւետիք Ղուկասեանի կտակով պիտի ուղարկվի երեք հոգի «հայ լուսաւորչական տղայք բարձրագոյն դպրոցներ կատարելագործուելու համար»
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ կամ ՌՈՒՍԱՍՏԱՆ
1) Ցանկացողները պիտի աւարտած լինեն ս. Էջմիածնի ճեմարանը, կամ միջնակարգ դպրոց։
2) Պիտի ներկայացնեն խնդրագրի հետ իրանց աւարտման վկայականի պատճէնը և տպագրած աշխատութիւնները, եթէ ունեն, միևնոյն ժամանակ յայտնեն թէ ինչ են կամենում սովորել։
3) Ցանկալի է, որ ներկայացնեն իրենց աւարտած դպրոցի մանկավարժական խորհրդից յանձնարարական։
4) Ճեմարանի մանկավարժական խորհուրդը նախապատւութիւն կը տայ պատմական-բանասիրական մանկավարժական ու բնական գիտութիւններին։ Դիմել մինչև ապրիլի 1-ը 1907 ամի, ճեմարանի՝ տեսչին։ 1—2

Բացված է բաժանորդագրութիւն
ՀԱՅԵԼԻ
Գեղարուեստական եզիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։
Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ եզիծաբանների խմբական նկար։
Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։
Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՈՊԷԿ
Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրեմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առատութիւն եւ 3) Խաղաղութիւն։ Նոր բաժանորդները կստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները։ Պատրաստվում է տպագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրեմիան № 4—ԳԵՐԻՆԵՐ և զատկական պրեմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, չքեղ նկարը—ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.։
ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար պրէմիաներ առանձին արժեն հատը 50 կոպէկ։ Մեծադիր գունաւոր նկար պրէմիան 3 րուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli»։ Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը։
Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէճեան
(եր. հինգշ. և շաբ.) 40—1

Մանուկներ, օգնեցէք Շուշւայ և Զանգեզուրի սովեալ ընկերներին
(տես № 1 երես 40)

ՀԱՍԿԵՐ
№ 2. Փետրւար 1907 թիւ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1. ՀԱՄԼԻԿԻ ԱՂՕԹՔԸ,—Ըստ Կլաւդիա Լուկաշևիչի,—Փոխ. Յ. Թ.
2. ՀԱՄՈՎԴԵՂ,—Սովասիլենա
3. ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ,—Պատմուածք պատկերներով,—Շամունէ Ստամբօլցեան
4. ԱՐՄԻԿՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ,—Ղազարոս Աղայեանց
5. ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԸ,—Վ. Միրովիչի
6. ՄՏՐԱԿ,—(Ըստ ֆրանսերէնի),—Տիկ. Հորտանս Գաւթեան
7. ՁՆԱԳՆԴԻ,—Սիմակ
8. ԹՌՉՆԻԿ,—Պլեշչէևից,—Ալ. Ծատուրեան
9. ԱՐՇԱԿԻ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԸ,—Պատմուածք տիկ. Մարգարտի
10. ԻՆՉՈՒ ԿԿՈՒՆ ԴԱԴԱՐԵԼ Է ԲՈՒՆ ՇԻՆԵԼՈՒՑ,—Պատմեց Խաչատրեան
11. ԵԴԻ ՕՐԵՐԻՆ,—Պատմուածք Յակ. Աղաբաբի
12. ԳԻՔՈՐԸ,—պատմուածք Յովհաննէս Թումանեանի
13. ՄԻՋԱՏՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ,—Ճանճեր,—Մ. Մուշյեանի
14. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ
15. ՁԻԱՐՃԱԼԻՔ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պ. Կապտերեւ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
(33—48)

Սրանով յայտարարում ենք, որ
Կոմիսիոներական ընկերութիւնը
ԵՒԼԱԽՈՒՄ ընդունում է ամեն տեսակ յանձնարարութիւններ Շուշի, Նուխի, նոյնպէս և Ռուսաստանի այլ քաղաքներ ուղարկելու համար, վերցնելով շատ մատչելի կօմիսիա։ Ընկերութեան անհոգութեան պատճառով պատահած վնասների համար պարտաւորվում ենք պատասխանել մեր սեփականութեամբ։
Յարգանօք՝ Յ. Թ. Տէր-Յովհաննիսեան
5—10 օրամէջ Հասան Կարաեվ Սաւմի

Ապպարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ".

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ
Փետրվարի 20-ից սկսած մինչեւ մարտի 3-ը վաճառվելու են
ՆՈՐ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

Մնացած պլաստինկաները նոր կատալոգը կազմելուց յետոյ

Սովորական փոքրերը	1 ր. 10 կ.	փոխարէն	— 75	կոպէկով
» մեծերը	2 ր. 20 կ.	»	1 ր. 50	»
Էքստրա »	3 ր. 50 կ.	»	2 ր. 50	»
Սովորական զիգանտ կոչած	4 ր. —	»	3 ր. —	

„ԳՐԱՄՄՕՖՕՆ"
Ակցիօներական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունքը
TRADE MARK
GRAMMOPHON
ԳՈՐԾ. ԴՐՈՇՄ
Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 9.
Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія,,. 3—4

Ապպարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ".

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатная Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская, ул.